

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻ 24

13 ՕԳՈՍՏՈՍ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օրուան նօթեր. ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.—Նիշէ եւ Կրօնք. ՄԵՍՐՈՊ ՎՐԴ.—ՆԱՐՈՅԵԱՆ.—Ժայռի ջուրը (Հակալուսկան մրցման համար) ԵՒ. ԳՈՂԱՆՃԵԱՆ.—Անտառի լուսինն եւ գիծեր (Բանաստեղծութիւն Սիւլլի Բրիւսսի) քաղգմ. Մ. ՌԻՂՈՒՐԼԵԱՆ.—Մայր Աքոռի գործեր.— Նորերու քաժիքը. «Բաժանման խօսքեր» (Ոսանաւոր) Ռ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ.—Միջազգային արձագանգ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագինն է Կ. Պոլսոյ համար ֆառսուն դր. եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ 5 ռուպլի: Թղթատարական ծախքը տեղագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ անսու:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուի:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտի պայմաններով:

Ձեռքէ կը ծԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

درعليه غلطه (ماسيس) غزتهسى ادارهسى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Ծաղկաբուսական թէյ

Թէյը, որ այսօր գրեթէ բոլոր ժողովրդերոց գլխաւոր ըմպելիին դարձած է, ա՛յնքան բազմաթիւ տեսակներ ունի որ, արդարեւ գործածողներուն համար բաւական դժուար է լուր ընթերցութիւն մը ընել: Այդ տեսակներէն մասնաւոր նշանաւոր են իբր Խորթաճաճաճ եւ քաղցրաբոյր, մասնաւոր թէյեւ նոյնքան Խորթաճիլ համ ու հոտ չունին, գերազանց են սակայն իբր կաշաղաւրի եւ զօրացուցիչ. վերջապէս իւրաքանչիւր թէյ իր ուրոյն յատկութիւններն ունին որոնք զինքը կը զանազանեն ուրիշ, տեսակներէ:



Սակայն կայ թէյ մը, որ այդ յատկութեանց ամէնէն կորեւորները կը միացնէ իր վրայ, այսինքն՝ գոյն, համահոտ եւ մանուշահոտ կաշաղաւրի եւ զօրացուցիչ տեղադրական ազդեցութիւն մը, եւ այդ թէյն է ճաքոն-ճի քիլը, որ այդ յատկութեանց շնորհիւ կը յարմարի ամէն տարիքի ու կազմութեան, ամէն կլիմայի եւ եղանակի եւ ամէն ճաշակի:

Նախընտան եւ Իսազուլեան քիլի մեծ վաճառատունը, իր բազմաթիւ յաճախորդաց ծառայութիւն մը մատուցանելու համար, այս անգամ մեծաքանակ ներածած է ճաքոնական զուտ թէյ մասնաւոր եւ դոկական աւափերով ու կը հրաւիրէ օգտուիլ այս առիթէն բոլոր տնային, որ կը փոփաքին ունենալ թէյ մը:

Համով, հոտով, առողջապահիկ եւ կազդուրիչ:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հնդկական, չինական, Սէյլոն եւ Զեփալի ամեաւոր տեսակ թէյեր:

1—10

Ուտադուրթիւն մարգայի

ՏՈՔ Թ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբու եւ կնիքաբան (gynécologue), Տօքթօր Էմիրզէ որ 15 տարուան գործունէութեամբը մեծ համբաւ ստացած է, կը ծանուցանէ յարգոյ յաճախորդներուն թէ բնականօրէն փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18, Բաց ի վերայիշեալ իւր մասնագիտութենէ կը բուժէ նաեւ նորագոյն մէթատերութիւնները եւ հոգեկան ու երեւակայական ամէն տեսակ հիւանդութիւնները, ինչպէս շէվրասթէնի եւ tic անուանուած աչքի երեսի եւ ուսերու ագեղ եւ ակամայ շարժումները եւ դաշտանի դադարումէ յառաջ եկած ջղային խռովումները եւ երիտասարդական մալիքները, ինչպէս նաեւ գրեհմալիքը, մօրթնամալիքը եւ այլն:

Կիրակիներէն զտա ամէն օր կէսօրէն սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կընդունի, եւ ուրբաթ օրերը ձրիաբար կը դարմանէ վկայեալ ուղքատները: 1—10



ՅՈՎՍԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ (ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՅԱՍՆԱՐՈՅԺ

Մուղաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Դեպքանատան

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Զրաւեան աբաղքման

Պալպալեան ամէն օր ակոյալ ամէն տեսակ հիւանդութիւններով տառապողներ, կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Դիչերուան օր եւ է ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'երաշխարէ իր լեցուցած ու շինած ակոյաները: Յօրեկները ակոյայ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կախեալ է: Վկայեալ տառապանքներ ծուրի Տիկին Բօլին եւս կը դաշտանի միշտ նոյն դարմանատան մէջ: Աղփասեցրուց ձրի 1—10

CAISSE PATERNELLE

ՔԷՍ ԲԱԴԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՋ 1841 ԻՆ

ԿԸ ԳՈՐԾԷ ՅՐԱՆՍ. ԿԱՌՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿՇՈՒՆ ՏԱԿ

Սկիզբէն ի վեր ապահովագրեալներու եղած վնասում 300 միլիոն ֆր.

Սկիզբէն ի վեր արձանագրեալ ապահովագրութիւնք 700 միլիոն ֆր.

ԸՆԹԱՑԻԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՅՐ. 85,000,000

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍՏ 62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց գումարին վրայ պահեստի համեմատութիւնն է 740/0. որով ՔԷՍ ԲԱԴԵՌՆԵԼԻ ընծայած երաշխաւորութիւնը գեր ի վեր կը հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցայց պատճառ երաշխաւորութեանէն:

Ընկերութեան վարչական Խորհուրդը կազմուած է Ֆրանսայի ամէնէն նշանաւոր դրամատէրներէն, ինչպէս

Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Ֆրանսայի եսկաթուղեաց ընկերութեան եւ Քրէտի Լիօնէի վարչական Խորհուրդ, անդամ.

Մ. ՄԱՐԲԻ ՏԸ ՖԼԵՌ, Դրամատիւնդիք ընկերութեան վարչական Խորհուրդ, անդամ.

Մ. ԿՈՄՍ ՏԸ ՍԷՆ ԿԻԼԶԷՄ, նախկին գանձապահ.

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Քրէտի Լիօնէի.

Թուրքիոյ Տնօրէն Պ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Պալիս, Սուլթան-Համամ, Բասաժ Քաթարճըզլու

Ընկերութեան վաստակներէն առնելու համար դիմել Քրէտի Լիօնէի.

ԾԱՆՈԹ.— Եանաւոր դիրք պիտի տրուի այն ֆննիչին որ կարեւոր արդիւնք մը ի ազդեցած ըլլայ անձնապէս:

4—10

Ա.ԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամէն տեսակ քօհաֆիլի ապրանց

Մեծ—Շուկայ, Քիւրքճիներու դրան կից, Թ. 41—43

Նոյնպէս, արանց եւ կանանց ճաշակաւոր հովանոցներու վաճառատուն, Պալիս, Սուլթան-Համամ, Միտիլի Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ թօնաֆիլի վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց յառուկ հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն տեղանուութիւն, եւ դիւրամտ չելի գիններու առուելութիւնն ալ կ'ընծայեն հասարակութեան:

Անդամ վարդեան մեծապէս գոհ թողուցած է իրբազմութիւն յաճախողները:

Կէտք է որ Շուկայ Ելլող ամէն ընտանիք այցելէ անգամ մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հագալու համար:

4—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զտա, մասնագիտաբար եւ երկար տարիներէ ի վեր կը դարմանէ ստամոքսի, աղեաց, միզային ճանքաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հին եւ նոր գաղտկան ախտերը: Այս վերջին ախտերը՝ առանց ստամոքսի խանգարման եւ նորագոյն մեթոսներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի ամէն օր կէս օրէ վերջը Զարեքաբթի օրերը միայն ճրի: 4—10

Ծիւրական ախտի դեմ նախադրուելովեան միայն ճամբայ մը կայ, այն է մարմնը փշա
կենսական զօրութեամբ պահել որնոր դրուլեան կենսական զօրութիւնն, առողջութիւնն
ն դիմացողան ղո՞ւ տալով կրնայ ըլլալ:



աշխարհըսիս մէջ ամենալաւ “ուսուցիչ-դէպ” է. որ շուտմը
աւուղջնութիւնը կը վերականգնէ և երակներու մէջ նոր
հարուստ արիուն կը տարածէ:

Եթէ կազմութիւնը կատարեալ առողջութեան մէջ չէ և բարակցաւ առաջին նշանները երեւան կ'ըլլեն. ինչպէս տեղող կան գունատութիւն, թէթեւ աւկայն թէլաթար չազ, գիշերները սաստկացող բարեխառնութիւն և արտօժակի կորուստ են. ժամանակ վատնելու չէ, մէկէն Լսգործի Խաղաղութիւն առնելու է. միակ դեղն է որ կրնայ մարդս առողջութեան և զօրութեան վերականգնել և այս եղելութիւնը գործնականապէս կը տեսնուի վասնզի չազարաւորներ տեսածն և կը տեսնեն :

կատարելապես անուշահամ է, ախորժակը կենդանացունէ, և մարտորդութիւնը չի աճապարէ: Հիւանդութեան սերմը կը մեղցընէ և շուտով մարմինը կը զաւալէ: Ըստօթի Բաղադրու-
թիւնն ընդմիջ այս տեսնուած նշանով մարդագոյն փաթեթի
մը մէջ կը գտնուի:

Շիշերու վրայ ասոր ուշա-
դրու թիու ընկ պէտք է:

Բնւոյ տեղագործները և տեղալսաւորները իւ ծախելն :

Վարժարանն ի՛նչ. տարեկանը կը-
սկսի սեպտեմբեր 6-ին (Ն. Տ). Հաստատու-
թեան Տնօրէն վեր. Ռ. Զէյմպրոս եւ իր
Տիկինը արդէն վերադարձած են իրենց
երկամեայ բացա՛յաւթնէն եւ լաւ-ջի-
կայ տարի ուսուցչական խումբին վրայ
հ'աւելնան Բանաստայր մէկ նշանաւոր
համալսարանէն երկու Ամերիկացի չրջ-
նաւարաներ որոնց մէկը գլխաւորապէս
պիտի աւանդէ առեւարական դասըն-
թացքը, Աշակերտները ընտանեկան խնամք
կը վայելեն գիշերօթիկ ուսուցիչներուն,
հաստատութեան մասնաւոր բժիշկին հըս-
կողութեան եւ Թիկին Զէյմպրոսի մայր-
կան հգգա՛ծութեան տակ: Գիշերօթիկ
աշակերտներուն տարեթաւակն է 16 օսմ.
սեկի, 8 սեկին սեպտեմբերին սկիզբը եւ
մեացած 8 սեկին լուհնաւորի վերջերը
վճարելի:

Վարդապետն յառաւել անսուղիւ մը անի
ցործեալն երթալաւ թեան համար եւ
այս դռնին տարեկան մասնաւոր վճարուին
է 1 աւ կէս սակի օտմ:

Աւելի տեղեկութիւններու համար դիմել
Մ. Բիթի. Պալարի Հասց. Կ. Պոլիս.
Կամ Տնօրէնութեան՝ Պարաիզակ: 2-6

Վարժարանիս լաւագիւոյ տարեշրջանը
կրօնիս Սեպտ. 15ին, Գիշերօթիկ աշակեր-
տակիները կը սպասուին 14ի երեկոյին:
Հաստատութիւնս մեծ բարւոյցով կրած է
կեդրանական ջեւաւերիչի եւ կադի ներմու-
ծումէն եւ նոր բազմեքին շինութենէն ի վեր
սր մայրաքաղաքին մէջ գտնուածներուն տ-
մէնէն քնտրել է:

Ըստ արժանության ի նկատ կ'առնուի Հայ
Դպրոցներու մէջ կատարուած գործք. որպէս
կը ներկայացուի այն՝ բերուած վկայական-
ներով: Գրաբար եւ աշխարհաբար Հայերէն
Կ'առնուի խնամով եւ կատարելապէս:

Գործէն ունի երաժշտութեան զօրաւոր
ձեւդ մը, ունի հ'աւանդական դաշնակ, եռ-
գիւնի, ցաւթակի եւ երգի դասեր: Յաւ-
կայ, տարի մասնաւոր ուշադրութիւն պիտի
ստանա՝ հոգաւորութեան եւ նկարչութեան:
Դարձեալ, ուղղակեալն հ'աւանդութիւն ձեւա-
գիտութիւն, մեքենայով գրել, օղակաւ-
թիւն եւ առեւտրական թղթակցութիւն:

Աւերի անգեղակոթիկէն խնդրողները իրենց
նամակները Գրէէէն Ն-ի ազգային օգոգելու
են ու հասցէով. Dr. Patrick, c/o British
Post Office, Constantinople. 3-6

ՄԱՍԻՆ

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 24

13 ՕԳՈՍՏՈՍ 1905

ՕՐՈՒԱՆ ՆՕԹԵՐ

(ԽՄԲԱԳՐԱԿԱՆ)

Մասիսի նախորդ թիւը մամուլի յանձնուելու վայրկեանին միայն կրցանք ծանուցանել, երկտողով մը, Ռուսահայ եկեղեցապատկան կալուածներուն ու դպրոցներուն Հայ Եկեղեցւոյ վերադարձուելու բերկրառիթ լուրը զոր Ս. Հայրապետը Թիֆլիզէն հեռագրած էր Ս. Պատրիարքին: Անկէ ի վեր օրաթերթերը հրատարակեցին բաւական ընդարձակ մանրամասնութիւններ այդ կալուածներուն ու դպրոցներուն գրաւման պարագաներուն վրայ, ինչպէս նաև հոգելոյս Դէորդ Դ. Կաթողիկոսի օրով գոյութիւն ունեցող դրութեան և օրէնքի մասին (*) օրով վերստին պիտի մատակարարուին այսուհետև, կայսերական Ուքազին կամ Հրովարտակին համաձայն զոր հրատարակած է Բեդերսպուրկի պալատնաթերթը: Աւելորդ է շեշտել այս ուրախալի լուրին առաջ բերած հոգեկան հրճուանքը Ազգին ամէն դասակարգերուն վրայ, որուն արձագանգ եղաւ Պոլսահայ մամուլը, անգամ մը ևս հռչակելով այս առթիւ թէ Թուրքիոյ Հայերս ի վաղուց անտի անվրդով կը վայելենք Օսմանեան մեծապանծ Գահուն հովանիին ներքեւ, եւ շնորհիւ Օգոստոսիա Սուլթանին, ամէն արտօնութիւններ ու շնորհներ՝ մեր եկեղեցիներուն, դպրոցներուն ու բոլոր բարենպաստի հաստատութեանց մատակարարութեան եւ անոնց գոյքերուն ու կալուածներուն նկատմամբ,

(*) Մ.—Յաջորդ էջի մը մէջ հրատարակած ենք այդ օրէնքին գլխաւոր տրամադրութիւնները, Սուրհանդակէն առնելով:

եւ որուն համար երախտագիտական անխախտ զգացումներ կը տածենք միշտ:

Նախորդ եօթնեակի վերջին երկու օրերու միջոցին թէ՛ Պատրիարքարանի եւ եկեղեցական շրջանակներուն մէջ եւ թէ՛ ամէն բարեպաշտ ու կրթասէր Հայու համար ա՛յս էր խօսակցութեան գլխաւոր նիւթը, խնդրութիւն յայտնուելով միանգամայն որ յաջողութեամբ պատկուեցան վերջապէս այն երկարատեւ ջանքերն ու դիմումները զորս չի դադրեցաւ ի գործ դնելէ աւելարդ Ս. Հայրապետը, աջակցութեամբ Կ. Պոլսոյ Ս. Պատրիարքին եւ Ազգին միւս հոգեւոր պետերուն, Մայր Աթոռին եւ հետեւաբար ամբողջ Ազգին պատկանող եկեղեցական կալուածներն ու դպրոցները վերադարձնելու եւ անոնց մատակարարութիւնը՝ բաղձացեալ նախկին դրութեան վերածելու համար:

Ի պատասխան Հայրապետական աւետաբեր հեռագրին, Օրմանեան Ս. Պատրիարքը հետեւեալ հեռագրին ուղղեց Ն. Ս. Օծութեան ի Թիֆլիզ.—«Ռուսիոյ Զարին կայսերական Ուքազի հրատարակման լուրը, որով «եկեղեցական կալուածները կը վերադարձուին եւ դպրոցներու բացեմը կ'արտօնուի, անհուն ուրախութիւն պատճառեց: Կը «շնորհաւորեմ Զերդ Ս. Օծութիւնը, երկար «կեանք կը մաղթեմ եւ օրհնութիւն կը հայցեմ»:

Խնդակցական հեռագիրներ ուղղեցին նաեւ Տ. Հմայեակ Սրբազան եւ ուրիշ եկեղեցական Հարք: Կը ծանուցուի միանգամայն

թէ մայրաքաղաքս գտնուող եպիսկոպոսները, իբրեւ միաբան Ս. Էջմիածնի, շնորհակալութեան գիր մը պիտի ուղղեն ի Բեդերսպուրկ, պատկանեալ իշխանութեան միջոցաւ:

Բնական էր որ Վարչական մարմիններն ալ իրենց զգացմանց արտայայտութիւնն ուղղէին Մայր Աթոռ, պատշաճաւոր եղանակով մը: Եւ արդարեւ, Բաղ. Ժողովը իր վերջին նիստին մէջ ուրախութեամբ տեղեկանալով Հայրապետական հեռագրին զոր ներկայեց Ս. Պատրիարքը, որոշեց գիր մը ուղղել Ն. Ս. Օծութեան՝ իր խորին շնորհակալութիւնն ու գոհունակութիւնը յայտնելով խնդրոյն այս բարեյաջող ելքին համար: Յիշենք նաեւ Մանկունի Սրբազանին նամակը. Օրթագիւղի պատուակալ քարոզիչը, որ երկար տարիներ պաշտօնավարած ըլլալով ի Ս. Էջմիածին, մասնաւոր հետաքրքրութեամբ և գիտակցօրէն հետեւող մըն է Մայր Աթոռի գործերուն, ինքն ալ փութաց շնորհաւորութեան ու շնորհակալութեան գիր մը ուղղել Ս. Հայրապետին, այս առթիւ հաղորդելով նաեւ 1874 թուականին Տ. Գէորգ Կաթողիկոսի օրով գործադրուած դպրոցական կանոններու մասին իր ունեցած ծանօթութիւնները՝ իբրեւ ժամանակակից: Տ. Վահրամ արքեպիսկ. աւելցուցած է, որ եթէ անցեալին մէջ այդ առթիւ կատարուած թղթակցութեանց բնագիւղներէն կորսուածներ կան, ինք պատրաստ է ղրկել զանոնք՝ պատճէններէն քաղելով, ծառայութիւն մը մատուցանելու համար Ն. Ս. Օծութեան:

Վարչական աշխատութեանց կարգին մէջ ուշագրաւ էր այն խորհրդակցութիւնը զոր Բաղ. Ժողովը ունեցաւ Տնտեսական Խորհուրդին հետ: Այս չորեքշաբթի օր, Կեդր. Մետուկի ելմտացոյցին հաւասարակշռութեան խնդրին վրայ որ ամէն ժամանակ զբաղեցուցած է Պատրիարքարանը՝ քիչ անգամ արդիւնքի մը յանգելով, եթէ ոչ բնաւ: Բայց դատելով արդի Տնտեսական Խորհուրդին ցոյց տուած մասնաւոր հոգածութենէն այդ խնդրին վրայ, և մասնաւոր անոր ատենա-

պետին՝ Գէորգ Էֆ. Ասլանեանի ունեցած ձեռնհասութենէն՝ թուանշանի ու հաշիւի վերաբերող ամէն բանի մէջ, ներելի է յուսալ որ բաղձացուած հաւասարակշռութիւնը գտնուի և իրագործուի: Պատրիարքարանի դիւանատունէն լրագրաց հաղորդուած զեկոյցը շատ հակիրճ էր. — «Ժողովը զբաղեցաւ Կեդր. Մետուկի ելմտացոյցի խնդրով և առաջիկայ տարուան համար ինչ ինչ կարգադրութիւններ ըրաւ»: Համաձայնութիւն մը գոյացած է ուրեմն, բայց մանրամասնութիւնները չեն ծանուցուիր:

Ոչ նուազ կարեւոր խնդիր մը ձեռք առած է Տնտեսական Խորհուրդը այս միջոցիս, — այն է Պատրիարքարանի Մետուկին աւանդ ձգուած դրամներու մասին քննութիւն մը կատարել և ստուգել թէ այս կամ այն մարմիններէ Պատրիարքարան յանձնուած գոյքերն ու դրամները ինչ կերպով գործածուած և ինչ նպատակով ծախսուած են: Յայտնի է թէ Տնտ. Խորհուրդը պատասխանատու է այդ աւանդներու պահպանման, և հետեւաբար ո՛չ միայն իր իրաւասութեան սահմանին մէջ կիյնայ այդ քննութիւնը, այլ մինչև մէկ աստիճան բարոյական պարտականութիւն մը ունի ստուգելու և ճշդելու: Հաւանական է որ Բաղ. Ժողովին հետ իր ունեցած համագումար նիստին մէջ այս խնդիրն ալ խորհրդակցութեան առարկայ եղած ըլլայ:

Լրագրական չրջանակի մէջ՝ օրուան... գայթակղական յօդուածը կը մնայ միշտ Կորիւն վարդապետի տխրահուշակ գրուածքը որուն չափազանց պատիւ մը ըրած եղան Տ. Մկրեան և Տ. Սահակ աւագերէցներուն պէս եկեղեցականներ՝ պատասխաններ գրելով: Արհամարհոտ լռութիւն մը լաւագոյն պատասխանը պիտի ըլլար հայ վարդապետի մը դէմ որ Հայ Եկեղեցիի դաւանանքէն և կարգուսարքէն կրօնական չեղումներ առաջարկելու և պաշտպանելու չի քաշուիր հրապարակաւ, և արդէն Պատրիարքարանը փութաց յանդիմանագիր մը ուղղել յիշեալ վարդապետին որ Ակնայ սուղնորդական տեղա-


պահի պաշտօնը կը վարէ։ Ի՞նչ պիտի մտածէ այդ տեղի բարեպաշտ ու ջերմեռանդ հայ համայնքը իր հոգեւոր հովուին նկատմամբ, այս հրատարակութիւնները կարդալով, և ի՞նչ յարգանք պիտի ունենայ։ Բայց որովհետեւ խնդրի առարկայ եղած յօդուածին հեղինակը ո՛չ միայն վարդապետ մըն է, այլ Արմաշական վարդապետ մը, Դպրեվանքին ինամական կալութիւնն ալ՝ գայթակղած ու սրտնեղած՝ Ս. Պատրիարք Հօր դիմեց, իր զգացումներն արտայայտելու։ Կերեւայ թէ ճիշդ է պաշտօնակցի մը այն դիտողութիւնը, թէ այս վարդապետը «իր վրան խօսեցնելու, ամենուն մտածման ու խօսակցութեան առարկայ դառնալու» մարմաջէն բռնուած է։ Պատրիարքական յանդիմանագիրը որ ուղղուեցաւ իրեն այս առթիւ, անշուշտ զօրաւոր դեղութիւն մը պիտի ըլլայ այդ մարմաջին դէմ։

* *

Երուսաղեմի վանքին հաշիւներուն քննիչ վարչական Յանձնաժողովը կանոնաւորապէս առաջ կը տանի իր աշխատութիւնները, իւրաքանչիւր նիստին ներկայ գտնուելով նաև Տ. Ղեւոնդ վրդ. Մաքսուտեան որ հարկ եղած լուսաբանութիւնները կուտայ։ Բայց, այդ մարմնին քնութեանց արդիւնքի մասին ոչինչ կիմացուի կամ կը հրատարակուի, վասն զի կանխաճառ պիտի ըլլար. կարեւորը՝ Յանձնաժողովին եզրակացութիւնն է զոր կարելի չէ կանխատեսել այժմէն. միայն թէ զանազան արձագանդներու նայելով՝ մինչեւ ցարդ չէ նշմարուած հաշուական անկանոնութիւն մը կամ մատակարարական թերութիւն մը որ համապատասխանէր ոմանց երեւակայել ուղած զեղծումին։



ԱՆՏԱՌԻ ԼՈՒՌՈՒ ՌԻ ԳԽՇԵՐ



Լուութենէն, խաւարէ՛ն աւելի բան մըն է, զի
Իւրաքանչիւր մենութիւն ունի խորհուրդն իր յատուկ—
Անտառն ալ իր լըռելու, մըթըննալու կերպն ունի
Աչքերուն դէմ՝ զորս անուրջ մը կը տանի հոգ գաղտուկ։

Իր լըռութեան մէջ կըզգաս չըրջիլն հոգւոյն՝ աղմուկին
Եւ գիշերին մէջ՝ զըտուիլն աւազներուն լուսեղէն.
Իր խորհուրդն է կենդանի—մարդիկ իրենց ճաշակին
Ու յուշերուն համեմատ զայն կը կըրեն, կը մեկնեն։

Անտառներուն գիշերէն խոհերու այգ մը կը ծնի.
Եւ նըպաստող՝ թըռիչքին՝ դարձեակներուն համաչափ,
Իրենց լուռն է թեւաւոր, նըման նիրհող թըռչունի։

Եւ անտառին մէջ՝ ահա՛ անձնատուր՝ սիրտն առ խարխափ.
Իր մըթութիւնն աւելի կը խորցընէ ակնարկներ,
Եւ իր լըռէն կը շինուին խոստովանանք սիրանուէր։

Թարգմ. Մ. ՌԻՆՈՒՐԼԵԱՆ

ՍԻԻԼԼԻ ԲԻՒՏՈՄ

ՆԻՉԻԷ ԻԵ ԿՐՕՆՔԸ

Նիչէ որ իր ինքնատուութեամբ գրականութիւն մը ստեղծած է իր շուրջը, անծանօթ կը մնայ մեզի: Իր անունը հազիւ թէ լսուած է, առօրեայ այժմէութեամբ զբաղող մեր թեթեւ գրականութեան մէջ: Fr. Rittelmeyerի Nietzsche und Religion գործին ընթերցումը առիթ կ'ընծայէ ինձ՝ համառօտիւ ներկայացնելու գերման այդ արտակարգ մտքին գլխաւոր վարդապետութիւնները:

Նիչէ որ ժամանակակից մտաւորականութեան պետերէն մէկն է, սովորական խորհողներէն չէ: Փիլիսոփայական գրութեան մը զպրոցին չի վերաբերիր, ինչպէս ամէն հզօր միտք, որ պարզ աչքերէն աւելի խոր կը տեսնէ իրերը: Նա այն կարծիքէն է թէ փիլիսոփայութիւն մը որքան ալ վէս և գիտական պնդանքով մը ներկայանայ, ի բնէ ուրիշ բան չէ՝ բայց միայն փիլիսոփային քողարկուած ինքնակենսագրութիւնը, կամ տեսակ մը յիշատակարան: Այս հայեացքը անշուշտ մեծ լոյս կը սփռէ Պլատոնի, Սքինոզայի, Բանդէի փիլիսոփայական գրութիւններուն վրայ:

Նիչէ ամէնէն խանդավառ գրուածուին է կեանքին, որ գիցուհի մը հրապոյրն ունի իրեն համար. իր փիլիսոփայութիւնը կեանքին յաղթական երգն է, ճոխ, փարթամ, ուժեղ կեանքին: Նա իր բանաստեղծի խառնուածքովը կնոջ մը հոգին եւ մարդու մը կամքն ունի. և արտակարգօրէն զիւթիչ ու զգայուն կեանք մը ապրած է: Իր տեսութիւններուն մէջ հետեւելի ուղղութիւն մը չկայ. սեպ կատարներու, ահարկու գահավէժներու վրայ կը պտտցնէ ընթերցողը, որ գլխու պտոյտ ունենալով, աւելի սրտագին կը փարի պարզ ու հանդարտ կեանքին բարիքներուն:

Նիչէ, Հեկեղեան դպրոցի այս շքեղ դէմքը, կ'երազէր Շոքենհաւըր — Վակնէրեան բնազանցութեան և արուեստի վրայ գերմանական նոր քաղաքակրթութեան մը չէնքը կանգնել, իբրեւ հասարակաց տաճար մը: Նիչէ միայնակ և եզակի չէ իր գիրքին

վրայ, իր վարդապետութիւններուն սերմերը լիարուռ կը գտնուին Սթենդալի, Էմէրսոնի, Գարլայի մէջ. բայց առաւելապէս իր ճշմարիտ ներշնչողներն եղած են Շոքենհաւըր և Ռենան: Շատ ուշագրաւ է պատմութեան մասին իր հասկացողութեան նմանութիւնը այս վերջինին հետ: «Մարդկութեան նպատակն է, կ'ըսէ Նիչէ, ոչ թէ լուսաւորեալ համայնքներ արտադրել, այլ քանի մը մեծ մարդիկ. զի, ամբողջ քաղաքակրթութիւնը անոնց գործն է»: — «Բանախօսութեան գիւտերուն լայն կիրարկումը, կ'ըսէ Ռենան, գիտութեամբ, ուղեղով, դնդերներով գերազանց ցեղ մը պիտի կըրնայ արտադրել: Տեսակ մը աստուածներ կամ ձեռներ, մենէ տանապատիկ արժեքաւոր էակներ»: Ռենանի ձեռն, ուրեմն, Նիչէի գերմարդն (Uebermensch) է, որ իր վարդապետութեան առանցքը կը կազմէ: Այս գաղափարն ալ ինքնայատուկ չէ իրեն. առաջին անգամ կը գտնենք զայն Հենրիկոս Միւլլէրի՝ Հոգեպաշար ժամեւ խորագիրով գիրքին մէջ, Ժե. րդ դարուն խմբագրուած, ուր հաւատքով նորոգուած մարդը իբրեւ գերմարդ (surhomme) մը կը նկատուի: Կէօթէն ալ գործածած է զայն նուրբ երգիծանքով մը: Սակայն Նիչէի մէջ ընդարձակ աճում և այլափոխութիւն մը կրած է այդ գաղափարը: Նա իր զարգացման առաջին շրջանին մէջ՝ Շոքենհաւրի փիլիսոփայութեան հիման վրայ ծրագրած է «մեծ մարդուն» գաղափարական պատկերը: Բայց յետոյ, գիտութեան ճառագայթներուն լոյսովը քանի մը գիծեր փոխուեցան անկից: Գերմարդուն կամ իտէալ մարդուն պատկերը կը քննայ ամէն փիլիսոփայութեան խորը. Պլատոն երազած, Սքինոզա երեւակայած, Բանդէ խորհած է զայն: Նիչէի ինքնայատուկ գործն եղած է ոգեւորել այդ սառն և տոգոյն պատկերը, և նոր լեզուով մը մարմին և ջիւղ տալ սա հին առածին — «առողջ միտք, առողջ մարմնոյ մեջ»: Նա կ'երազէ և մտովի կը ձեւակերպէ առողջ, կայտառ, մտացի և խիստ մարդը, խիստ՝ իր անձին և ուրիշին հանդէպ, հզօր՝ ինքնագիտակցութեան

մէջ, կեանքի վիշտերուն հանդէպ, ուր տեղ չունի ամէն փոքրոգութիւն և ապիկարութիւն. ստեղծագործ մարդը, որ իր ներքին աշխուականութեամբ կը յատկանշուի ուրիշներէն, զարդարուած բարձր առաքինութեամբ, բարութեամբ լի, թաթաղուն:

Մոգական հրապոյր մը կը ճառագայթէ այս կենդանազիրէն, ուր լուսաւոր և համակրելի գիծեր կան. բայց ամբողջ պատկերը դիտած ատեննիս, ուր կենդանական բնազդը այնքան սուր և ուժգին կը խուժէ, թանձր ստուերի մը ծածանումը կը նշմարենք Նիչէի երեւակայած այդ կեանքոտ տիպարին վրայ: Նիչէ բնական կեանքի քերթուածը ուզած է գրել: Ապրէ՛, ինչպէս կը բաղձաս ապրիլ, կ'աղաղակէ նա. կեանքին սէրը իր հոգւոյն ամէնէն խոր և բեղուն խաւն է: Իր վարդապետութիւններուն արմատը և վառարանը:

Նիչէ գերազանցապէս հոգեբան է գերման խորհողներուն մէջ: Կ'արհամարհէ ամէն իմացական հեղինակութիւն և մտաւորական նուիրապետութիւն: Տեսական փիլիսոփաներուն ու գիտուններուն հանդէպ ցուրտ արհամարհանք մը ունի: Մինչ փիլիսոփայութիւնը հանդարտիկ իր ճամբան կը շարունակէ, իր բնազդանցական թեւերը զարդարելով երբեմն գիտութեան փետուրներով, Նիչէ կանգ կ'առնէ որոշ տեղ մը. մարմնոյ և հոգւոյ յարաբերութեանց հարցին վրայ չատ խոր կը մտէ իր նշդրակը: Բարոյական արժէքի (wertproblem) խնդրոյն մէջ ընտիր հայեացքներ ունի, ուր ոչ միայն չատ մը պատուական քարեր ի լոյս բերած է, այլ ճշմարտութեան նոր ոսկեգիտակներ գտած է: Նիչէ փիլիսոփայութեան պատմութեան մէջ խիզախ հետազոտիչն է, որ հեռաւոր ծովերու վրայ իր ցանցը նետած է:

Նիչէի վարդապետութիւնը թերեւս կարենայ փոքրիկ դեղթափ մը ըլլալ դարու ծաւալուն հիւանդութեան՝ յոռետեսութեան և կեանքէ յափրանքին դէմ: Օգտախնդիր երիտասարդութիւնը որ յաջողութեան ծաւալուն ունի, իր զարգացման բաղձանքներուն կատարեալ արտայայտութիւնը կը գտնէ հոն:

Եւ ինչ զարմանք որ այս հզօր տաղանդը, որ խիզախ կայք մը ունի արդի փիլիսոփա-

յութեան պետերուն մէջ, հրաշալի ոճով մը հիւսած է իր ցնցող, անիրաճալի և երբեմն անհեթեթ գաղափարներուն հիւսկէնը: Նա գերման ոմաբաճ եռապետներէն մէկն է: Կէօթէի ոճը եթէ յունական մէհեանի մը կը նմանցուի, իր գեղեցիկ չափակցութեան և պայծառ վեհութեան համար, Լուտերինը՝ հոռմէական գմբէթի մը, իր բարձրաթռիչ զօրութեան և յստակ ու հաստատուն գիծերուն համար, Նիչէի ճոխ, առնացի և բազմերանգ ոճը յաճախ Կիկլոպեան շէնքի մը կը բաղդատուի: Փափուկ վրձին մը կարծես մարմնաւորած է այս պատկերը. — «Արեւը իր անսպառ աղբիւրէն ծովուն մէջ կը հեղու իր ոսկին, այնպէս որ աղքատիկ ձկնորսը ոսկեփայլ թւեակով կը թիալարէ»:

Նիչէ իր գաղափարներով անմատչելի կը մնայ ամէն անոնց համար որ անգիտակ են ժամանակակից փիլիսոփայութեան ընթացքին: Խմոր մըն է ան, կը յարէ Նիչէ եւ Կրօնի հեղինակը, արդի քաղաքակրթեան զարգացման մէջ, որ իբրեւ առանձին սնունդ դործածուած ատենը կրնայ փաստակար ըլլալ տկար ստամոքսներու: Իր գործերէն կրնան օգտուիլ միայն ստեղծող միտքերը՝ բանաստեղծները, խորհողները և կորովամիտ մարդիկ:

Երբ Նիչէի առնացի հրապոյրներէն և աղեցնութեան թովիչ մթնոլորտէն ազատ՝ սովորական իրականութեան հանդէպ կը գլուխոնք, կը տեսնենք որ բոլոր այդ արտակարգ ճիգերը, այդ հանճարեղ բացատրութիւնները կեանքի առեղծուածին շուրջը կը թաւալին և կը կեդրոնանան: Կեանք, Լոյս, Սէր, զոր կ'երազեն, որուն կը բաղձան գիտութեան և իմացականութեան մեծ ներկայացուցիչները, և զորս Հերտէր իր տապալաքարին վրայ գրել տուած էր, չքեղաչուք փայլով մը կը ճառագայթեն Աւետարանէն: Այդ երեք բառերը, որ չատ անգամ տարտամ գաղափարականներ, գեղահիւս երազներ և մտքի խաղեր կը դառնան Նիչէի պէս խորհողներու քով, Կրօնքին մէջ իրական զօրութիւններու փոխարկուելով, կ'աճեցնեն, կ'աշխուհցնեն, կը բարձրացնեն կեանքը, վեհ և աստուածային նպատակի մը առջև դնելով մարդը:

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ

Դպրեմանք (Արմաշ)



ԿԸ ՅԻՇԵՑՆԵՆՔ մեր այն աշխատակիցներուն որոնք արամադրութիւն ունին հակալքուլական յօդուածներու մրցման մասնակցելու, թէ Հոկտ. 1ին (Ն. Տ.) կը փակուի մրցումը: Հետեւաբար, կը խնդրենք որ փութացնեն այդ նիւթին նուիրելիք իրենց գրուածքները զորս հրատարակելու համար հինգ շաբաթ միայն ունինք մեր առջև, այսինքն Մասիսի հինգ թիւ:

ԺԱՅՈՒ ԶՈՒՐԸ

ԱՌԱՔԻՆԻ Յ. ԹԱԽԱՆՃԵԱՆԻՆ

Ձեր գինեզուցները ջրասուցներու վերածեցեք եւ ձեր ջրասուցները՝ աստուածային յսակութեան մը վայելքին. յաւիտեակեան ցերեզաւակութեան մը փառաբանութեան մը:

Գիւղի մը անկիւնը գինետուն մը կայ, միա՛կ գինետունը, միա՛կ բիծը գիւղին պայծառ խղճին, միա՛կ ժահրն իր խնկարոյր մթնոլորտին:—Տղեկներ ու աղջիկներ, սատափի պէս ողորկ մերկաջինջ թեւերնին յաւերձարային շնորհալիութեամբ կը որոցուցած սափորի մը կամ կուժի մը վրայ, ետ կը դառնան, երեկոյին, իրենց աղբիւրէն, երջանիկ՝ ջուրին ծանրութեան տակ, ամէն մէկն երգելով իր երգն իրենց աղբիւրին վրայ, ու, գինետան առջեւէն անցնելուն, շփոթած, մէկգէլ՝ դէմի լերան կը նային, որպէս թէ անո՛ր ապաւինած: Լերան ետեւէն, նռնադոյն վերջալոյսն այերական համրոյրներով կը տաքցնէ իրենց թեւերը: Այդ ցուքերն, այդ այերական համրոյրներն, իրենց ծիրանեհէ փախուստին մէջ, կը մնչեն կարծես:—«Տղեկներ ու աղջնակներ, մենք քաղցրութիւնն ենք ձեր խոնջէնքին. տարէ՛ք տարէ՛ք ջուրը»: Ասկէ զատ, բաց ի գինետան խոտոտ տեսքէն զոր չե՛ն իսկ դիտած ամբողջովին, ամէն ինչ որ իրենց շուրջ կը ճաճանչէ ու կը խնդայ, ամէն ինչ որ կը լայննայ կը տարածուի քաղցրաստուեր վարն ու վե՛ր, ամէն ինչ որ լոյսին ոսկեթուխ ոսկե-

փոշի տամկութեան մէջ կը պարէ, ու հողին կանանչ վայրենութեան մէջ հեշտանուաղ՝ կը նիրհէ, ամէն ինչ կը միտի օգնել իրենց, ճանչնալ ու դիւրացնել իրենց գործն ու նո՛յն մնջիւնն հանել՝ խուլ ու աղու՝ որպէս թէ խոտի ու հողի տակէ:—«Տղեկներ ու աղջնակներ, մենք քաղցրութիւնն ենք ձեր խոնջէնքին, տարէ՛ք տարէ՛ք ջուրը»:

Ու ջուրը կը տարուի լոյսին պէս թեթեւ, փետուրի պէս անկշիռ, օդին պէս ազատ:

Տղեկներն ու աղջնակները, նայուածքի մը խուսափումին մէջ, երբ կ'ուղէին սեւեռիլ լերան, կը ճանչնան, ա՛հ, իրենց հայրերուն ու բարեկամներուն ծո՛յլ ընկողմանած ստուերները այն մութ տունին ցած ձեղունին տակ: Իրենց լուծիւնը լերան հպարտութիւնն ունի ու իրենց ժպիտը՝ ջուրին ուրախութիւնը: Իրենց խուլ շփոթումը, գինետան առջեւէն անցնելուն, տարտամ անհանգստութիւնն, ա՛յն ինքնաբերաբար կատարուած մեկուսի սեւեռապլումն հազար գիտութեան համաձոյլ համերանգ ումն ունի, . . .

Սովորաբար իրիկունները, գործէ դարձին, կը հաւաքուէին այդ գինետունը, գիւղին համատարած կանանչութեամբ չըջապատուած այդ փտարանն, այդ նեխարանը: Մամուռներն որ անոր պատերուն վրայ կ'արշաւեն. բաղեղներն ու պատատուններն որ անխոնջ կը սողոսկին մինչև տանիքն ու պատուհաններուն մէջ կը խնդան համեստ ու գորշ. խոտերն որ մինչև սեմին փտած փայտին մէջէն յամառ կը յառնեն գինեպանին ջնջող մատներուն տակ. ամէն բան որ հողէն կը մեկնի՝ միաբերան կը միտի ծածկել այս գինետունը անսպառ կանանչով:

Ամառնային կարճ բայց բուռն փոթորկի մը յաջորդող խաղաղ զով իրիկուն մը, երբ սովորական յաճախողները նստած կը իօսակցին ու անկապ անուսոյց աննպատակ արկածներ կը պատմեն իրարու, մէկը նաւարկութեան մը վրայ, ուրիշ մը այլանդակ ձմրան մը կամ զարհուրելի կարկուտի մը վրայ, իրենց մէջէն տարեց վարժապետ մը, իր մանկութեան զուարթ անխառն օրերը կարօտով յիշող յոգնած մարդ, յանկարծ,

մայրամուտի տարտամութեան մէջ, դէմի
լեռան ստորոտը, չա'տ վարը, մացառուտքի
ու մասրենիներու շուքին տակ ջուրի ն'ա-
նող ժապաւենային փալփլուն հոսանք մը կը
թուի նշմարել... Դինովները յօրանջելով
կ'երերտկան, հաղիւ թաշկինակի մը չափ
տեղ տեանելու կարող. կը խնդան, կը քաշ-
քըշեն ծերունի վարժապետը. — «Մէջքի գո-
տիդ չըլլա՛յ վարժապետ», «քոռտօնդ չըլ-
լա՛յ», «վարժապետը կը խենդենա՛յ կոր,
խենդեցա՛ւ», ելն.։ Խեղճ մարդը կը լռէ
ամօթահար, իր անկիւնին խորշին մե'ծ ըստ-
ուերին մէջ կը տոտողէ ալեխառն հսկայ
գլուխը, իր վիժած հանձարի գլուխը որ
մանկութեան դարձի ու պատուհաններու
լոյսին դառնալու գալարուն ձիգեր ունի, ու
հո'ն կը մնայ անշարժ, մեծ երազի մը սպա-
սելու ծարուի անայլայլ դիրքի մէջ...։

Երկու օր վերջ, իրիկուն մը, ծերունին
նորէն նոյն դիտումը կ'ընէ, քիչ մը աւելի
հպարտ ու դողդողուն միանգամայն։ Զուրի
ժապաւենը լայնցեր էր մասրենիներուն տակ
ու հաղիւ հարիւր. ոտք անդին, գիւղին միակ
պողոտան եղերող մեծ կաղնիին շուքին տակ
յառաջանալու վարանումներ կ'ընէր. մայ-
րամուտին ծիրանեթուխ նշոյլներուն ընդար-
ձակ երանութեան տակ՝ կարծես թէ կը հըր-
ձուէր իր վարանումին մէջ, հասնիլ՝ յայտ-
նուիլ կրցողի պուտ պուտ վայելուած հպար-
տութեան մէջ։ Ծերունի վարժապետը կը
ժպտի, այս անգամ ճշմարիտ հանձարի վայր-
կենական ժպիտով մը. մանիշակախառն վար-
դագոյն լոյս մը թեթեւ իմն կը տաքցնէ փոս
այտերը. ու ծխախոտի երանգներ ունեցող
ալեխառն ցանցաւ մօրուքին մէջ կը ցրուի
կը բաշխուի՝ ամէն մէկ թելն յաղթական
ճշմարիտ հպարտութեան մը ծիծաղին վե-
րածելով։ Այդ ժպիտը տարօրինապէս կրօնա-
կան արտայայտութիւն մ'ունի. աչքին կո-
պերը կիսափակել կուտայ տեսակ մը քաղցր
ու խոնջ երեւոյթով մը, որպէս թէ իր յան-
կարծական լուսաւորութեան մէջ չա'տ ծանր՝
դժուարընկալելի բան մ'ունենայ. թեթեւ
իմն վեր ընել կուտայ չրթունքը ու, երկար
վայրահակ պէխերուն տակ, հեշտալի բաբա-

խումով մը, կը լայնցնէ ռուսները, բովան-
դա՛կ դէմքին՝ յամր րմպելու զբաղած երեւ-
ոյթ մը կը շնորհէ— ա՛հ, շնորհք մը այդ մութ
դէմքին վրայ— որպէս թէ այդ ժպիտն՝ իր
մանիշակաթուրմ վարդացանութեան մէջ
գաղջ խայտացող մտածումովն համակ՝ Բնու-
թեան ներիսկութենէն յանկա՛րծ փրթած
այերական եթերահուր ըմպելի մ'ըլլայ. գե-
րանջային վայրի ուրախութեան մը լուսա-
տամուկ հոսանուտութիւնը. անմարդաձայն
ջրակենդանութիւններու անհպելի անպա-
տում արծաթէն ու անոնց լուսաթրթռուն
ուրախութեամբ կանանչցած ժայռերուն ջիւջ
զմրուխտէն յանկարծաթի՛ռ բներգի մը թա-
քուն խնկաւետութիւնը...։ — «Վարժապետը
կը խնդա՛յ կոր», «նայեցէ՛ք, խենդեցե՛ր է»,
«քոռտօնը երկնցե՛ր է»։ Ոմանք ալ, կատար-
եալ անկեղծութեամբ, կոյուղիի կը նմանցնեն
ջուրի լայնցած ժապաւենը, վասն զի ալքօլը
որով թրմուած (saturé) է իրենց միտքը՝ կո-
յուղիէն չա'տ հեռու բան մը չէ...։ Ուրիշ-
ներ՝ լուսնի լուսով գիշերային մեծ լուացքի
մը հանձարեղ պատրաստութիւնները կը գու-
շակեն հոն։ Նուաղ անմիտներ՝ փոթորիկէն
յառաջ եկած տղմուտ ջրակոյտ մը կը տես-
նեն հոն, հետեւելով իրենց տղմուտ վիճա-
կին։ Այս դատումները գինովութեան աս-
տիճանաւորումներն են, ալքօլ ըսուած թա-
փուր (sans terrain)՝ ինքզինքն ուտող Դըրդ-
ուումի մը թոթովանքներուն վանկային յա-
ռաջատուութիւնները, եսը ծաղրանկարող՝
բթացնող անառարկայ բնամերժ Արուեստի
մը խոռոջային աղաղակները, ինչպէս որ բնօ-
րինաւոր՝ բնագօր մարդոց դատումները Տիե-
ղերական Մտքին արտայայտման աստիճա-
նաւորումներն են։ Մինակ վարժապետը կը
հեկեկէր, այս ցաւագին բաղմութեան մէջ
առանձի'ն, մահու չափ առանձի'ն. «Ասիկա
լեռան ջո'ւր է, լուսերու պէս ջո'ւր է, Աս-
տուծոյ ջո'ւր է»։

Շաքաթէ մը ի վեր խուլ ատելութիւն
մը սնուցուած է այս մարդուն նկատմամբ,
նոյն իսկ գինեպանին կողմէ. մանաւանդ որ
իր մտասեւեռանքովն արբելու, «փալփլուն

մասպաւէն»ով մտադրազ, չէ՛ր խմեր ալ, հա-
զիւ թէ կը ծխէր երբ ուղեղը չէր գործեր ո-
րոշակի, երբ իր առանձնութիւնը ցաւազին
դօրութեամբ կը զգար:

Յաճախորդները յոգնած կուգային, չէին
կրնար դիտել «լերան ջուրը», չա՛տ ուշ՝ ընթ-
րիքի ատեն և աւելի ուշ կը մեկնէին ու
նորէն չէին կրնար դիտել: Եւ արդէն ե՛րբ
կրնային դիտել, ե՛րբ կրնային ունենալ սեւ-
նել ըստած երջանկութիւնը: Մէկը որ չսի-
րեր, չդիտեր, վասն զի դիտելը սիրել է:
Մէկը որ միայն ալքոլը կը սիրէ ու անոր
նենգաւոր բոցին կը փարի, չա՛տ չատ կրնայ
զգալ անոր շոգիները որոնցմով կը կերտուին
իր մտքին լոյծ ու անտաղ (sans épitaphe)
գերեզմանը: Գինետան մէջ չխմող մը հայ-
հոյանքի պէս բան մ'է, կ'ուզեն հանել՝ ջըն-
ջել զայն ինչպէս կը ջնջեն կանանչ խոտի
շիւղ մը եկեղեցիի մը ճակատէն. իսկ ատեն
մը խմող ու յանկա՛րծ չխմելու արտէն զար-
նուած անդրադ մէկը՝ գինետան մէջ հայհո-
յանքէ վեր անհանդուրժելի անհեթեթ բան
մ'է, ինչպէս կոյուղիի մը մէջ բուսած փա-
ռաւոր խնկահոտ ծաղիկ մը զոր աղտեղու-
թիւնները կը սպառնան ջնջել ու իրենց դի-
ակնային փտութեանը վերածել, ա՛յն ծա-
ղիկը՝ որ առաջ իրենց մէկ մասնիկն էր ար-
դէն: — Ուստի և բոլոր յաճախորդներն ալ,
իրիկուն մը, միաբերան կ'որոշեն ծեծել վար-
ժապետը, դուրս ընել զայն իրենց խումբէն:
Այն օրը չաբաթ մը առաջուան փոթորիկը
կրկնուած էր, նուազ սաստկութեամբ: Տը-
ղեկներն ու աղջնակները չաբաթէ մը ի վեր
դուրս չէին ելլեր ու «փալփլուն ժապա-
ւէն»ին ուրախութիւնը առանձին կը մնար
ծերունի վարժապետին տրտմութեան հետ...
Ժամանակը, Աստուծոյ բազուկը, յայտնեց
զայն: Այն իրիկունն ուր պիտի ծեծէին
վարժապետը, «փալփլուն ժապաւէնը» պատ-
կառելի առու՝ դէպի գինետան կողմնակի
պատը արշաւած, մեղմակի կը լիզէր անոր
փտած կողերը, ինչպէս մայր մը կը համբուրէ
իր հիւանդ զաւակը... Օ՛, լերան պաշտելի
ջուրը, ժայռին արծաթ արցունքը ալքոլին
թողած թշուառ աւերակին վրայ, Ստեղծու-

մին տօնը վհատութիւններու սեղանին վրայ,
աստուածային յատկութիւնը, խնկաւետ
լեռներուն խաղաղութիւնն ու լոյսին ներ-
դաշնակութիւնը, ամէն բան որ կեանքին
կ'երթայ, վարդագոյն զուարթ՝ Ուժին ու
եթերային սիրով մը կ'օրհնէ կը մշտադմէ-
ացնէ՛ զայն, սէրը կեանքին բեղմնաւորու-
թեան գաղտնիքն եղած ու կեանքն անոր
անվրէպ արտայայտումը: Ջուրը և անոր
փայլը կարծես թէ նոր ստեղծուած ոգի մ'էր
իրենց աչքերուն տակ. իր ակնակիտ ըն-
թացքին մէջ կ'անգրադարձնէր լեռները,
բլուրները, մարգագետիններն ու վայրի ծա-
ղիկները: Կարելի էր ըսել թէ գինետան
մարդիկը միայն այդ խաղաղ՝ ծիրանիի ու
զմրուխտի երանգներով խայտացող անդրա-
դարձման մէջ սկսան ճանչնալ ախարհն ուր
կ'ապրէին տխուր ու մթին, այն առոյգ գու-
նապերճ գեղեցկութիւնն ուր դողդոջուն ու
տոգոյն կ'իյնային: Խմող մը վար կը նայի.
հաղուագիւտ է որ վեր նայի, վասն զի ալ-
քոլը կապարի պէս կը ճնշէ գլուխը. ուստի
և երբ ամէնքն ալ, սովորականին պէս, վար
կը նայէին, իրենց ոտքերուն՝ իրենց թշուառ
վտիտ ստուերին տակ տեսան ջուրը ու աչ-
խարհը առաջին անգամ, տեսան լերան լանջ-
քէն փրցուած ոսկեթուխ պատառներ, թաւ-
չային տիտան ստուերներ որոնք գիւղին գե-
ղեցկութիւնը կը պատմէին, մանիշակի ու
վարդի ու զմրուխտի հրաշալի գունախառ-
նում մը որ մթնոլորտին ջինջ ուրախութիւնը
կը թուէր ըլլալ... Ջուրը իրենց մտքին
զարթօնքը եղաւ, իրենց իմացականութեան
վերստեղծումը ու անոր խաղաղիկ փայլն՝
իրենց մէջ նոր արթնցող սէրը... Ծերունի
վարժապետը բաժակ մը առաւ անկէ ու խմեց.
միւսներն ալ իրեն հետեւեցան տարտամ վա-
խով մը: Բաժակը կը խողտար գերանջային
յայտնութեան մը պէս ու չրթունքներն որ
անյագ կը քամէին զայն՝ ոսկիի մանիշակի
զմրուխտի երանգներով դիւթական մեղրի
մը ընդարձակ անվերջ ճաշակի մը մէջ կը
նուաղէին կարծես... Լերամարին երանա-
ւետ գաղջութեան տակ ուր սև լերկ ժայ-
ռերն անգամ ցոլք մը ունին, ուր ամէնէն

տգեղ՝ տձև բաներն անգամ եթերահուր
տիեզերական Գեղեցկութեան մը հուրքով
կ'երազեն ու կը տաքնան, այս վտիտ հիւծ-
ուած գանկերը, ջուրին առջև անշարժացած,
նայուածքի մը մէջ սիրեցին աշխարհն, անոր
վայել մարդկային անուրջով մը որով հան-
ճար մը կը խնդայ տառապանքներուն: «Տը-
ղեկներն ու աղջնակները, երբ կ'անցնէին
հոսկէ, լերան կը նայէին», ըսաւ ծերունին
արցունքով մը.— ու յետոյ, անձառ հեգնու-
թեամբ մը, աւելցուց. «մենք դպրոցին մէջ
առաստաղին նայել կուտայինք զանոնք,
չաբաթ իրիկունները...»: Այն իրիկունը,
օդիի ու գինիի բաժակները ընդհատեցան,
ամէն մարդ լերան վրայ կը խօսէր, «Ժայռին
արցունքին» վրայ: Գինեպանը, վայրագու-
թենէ դարձող Պօղոս առաքեալի մը պէս,
սապէս բան մը մօտաց թաւ պէսերուն տա-
կէն. «Ինչ աղուոր ջուր». յետոյ, գինիի շի-
շերուն նայելով՝ աւելցուց.— «Ինչո՞ւ ջուր
ալ չծախեմ»: Այս «ալ»ը տրտմեցուց ծերունին,
վայրկեան մը սառեցուց իր արցունքին վսե-
մութիւնը, այդ միավանկին մէջ տեսաւ գի-
նիին ու օդիի շիշերուն եղկելի փայլը մայ-
րամուտին մէջ, ու շիշերուն դարձած՝ երկար
յօրանջեց ինչպէս նոր ապաքինած մը կը յօ-
րանջէ հայելիին մէջ՝ ցաւելով իր դէմքին
վրայ:

Իսնի մը օր վերջ, գինեպանն ու ծերունի
վարժապետը լեռը կ'ելլեն արշալոյսին, առ-
ուին գիծին հետեւելով: Կը գտնեն ակը:
Գինեպանը, մինչև այն ատեն դեռ ասորա-
կուսոտ, գրեթէ արտասուած թոր՝ ներում կը
խնդրէ ծերունիէն: Կ'որոշեն ջուրի ընդու-
նարան մը շինել: Այդ շինութեան համար
երկու ամիս երգելով կ'աշխատին նոյն ինքն
գինեպան յաճախորդները որոնք գործաւոր-
ներ էին արդէն: Նոյն այն գինեպանը ջրա-
տուն մը կ'ըլլայ, փառաւոր նորոգութենէ մը
վերջ: Գինեպանն ու ծերունի վարժապետը
ջրավաճառներ կ'ըլլան միասին, մէ'կ խանու-
թի մէջ: Բայց գինեպանն, հակառակ իր
յաղթ հասակին, միայն ստուերը կը թուի
միւսին: Վարժապետը մինչեւ այսօր թաքուն

արցունքով կը բաշխէ լերան ջուրը, ժայռին
արծաթ մեղրը, լեռներուն յուսածածանչ
խաղաղութիւնը, տիեզերական մտքին յստա-
կութիւնը, Ստեղծումին ուրախութիւնը...:
Միւսը, գինիին հոտը բոլորովին թօթափած
իր հագուստներէն, գաւաթները կը շարէ
միայն, խնկահոտ պայծառ ջուրին բաշխու-
մին համար:

ԵՂՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ

Գատըգիւղ

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Մեր այսօրուան խմբագրականին մէջ՝
Ռուսահայոց եկեղեցապատկան կալուածնե-
րուն ու դպրոցներուն Մայր Աթոռի վերա-
դարձուելուն վրայ խօսելու առթիւ, յիշած
ենք հոգեւոյս Գէորգ Կաթողիկոսի օրով գոր-
ծադրուող օրէնքը որով պիտի մատակարար-
ուին նաև այսուհետեւ այդ կալուածներն ու
դպրոցները: Այդ օրէնքը հրատարակուած էր
երսունըմէկ տարի առաջ, բայց մասնակի
յապաւումներով ու դադարումներով՝ յան-
գած էր կալուածներու եւ դպրոցներու գը-
րաւման գործին: Հիմայ որ կը վերահաս-
տատուի պաշտօնապէս՝ ու բացորոշապէս, շա-
հեկան կը համարինք հրատարակել հոս՝ ա-
նոր գլխաւոր տրամադրութիւնները որոնք
ամփոփուած են Ռուսիոյ այն ատենի ներքին
գործոց նախարար Լօպանով կոմսին կողմէ
Տ. Գէորգ Դ. Կաթողիկոսին ուղղեալ հե-
տեւեալ պաշտօնադրին մէջ. —

Ողորմած Հովուապետ

Ն Ս. Օծուքեւն Կաթողիկոս Ամենայն Հայոց

Կովկասի փոխարքայ մեծ իշխանը բարե-
հաճեցաւ տեղեկութիւն տալ ինձ այն ան-
համաձայնութիւններու նկատմամբ, որոնք
ծագած են Ձերդ Ս. Օծութեան և Կովկասի
փոխարքային գլխաւոր կառավարութեան
միջև, եկեղեցական ծխական դպրոցները՝ ազ-
գային ուսումնարաններու տեսուչներուն և
էջմիածնի վանական վարչութեան հսկողու-
թեան ենթարկելու մասին:

Խնդրոյն այս հանգամանքները, Կովկասի

փոխարքային տեղեկագրութեան վրայ, պատիւ ունեցայ ներկայացնելու Կայսեր, իսկապէս որոշելու համար ազգ. ուսումնարաններու տեսուչներուն ունեցած պարտաւորութիւններն ու առնչութիւնները, հանդէպ Հայոց եկեղեցական ծխական դպրոցներուն, ուայդ վարժարաններուն պատկանած առարկաներու հսկողութիւնը: Յուլիս 19ին Կայսրը՝ 1871 հոկտ. 29ի հրահանգներուն տեղ, հաճեցաւ հաստատել Կովկասի փոխարքային ներկայացուցած հետեւեալ կանոնները, Լուսաւորչական Հայոց թէ՛ հոգեւոր վարչութեան և թէ՛ ազգ. ուսումնարաններու տեսչութեանց համար:

1. Հայ հոգեւորականութիւնը 975րդ յօդուածին Ա. մասին տրամադրութեան համեմատ, կրնայ հիմնել եկեղեցական դպրոցներ և զանոնք կառավարել. նոյնպէս աշխատիլ դասաւանդութեան յարմար և կանոնաւոր եղանակ ընտրելու և ուսուցիչներու և ուսանողներու բարոյականին հոգ տանիլ:

2. Հայ հոգեւորականութեան հիմնած և կառավարած ազգ. վարժարաններու տեսուչները, պէտք է որ հանրակրթական ծխական եկեղեցական դպրոցներու հսկողութեան հոգը ստանձնեն 1873 Նոյմ. 22ին տրուած բարձրագոյն որոշման համեմատ, և բոլոր դպրոցներուն մէջ դասախօսեն՝ Ա. Ռուս լեզուն. իսկ այն դպրոցներուն մէջ, ուր ընդհ. պատմութիւն և աշխարհագրութիւն կ'աւանդուին, ուսուցանեն նաև Ռուսիոյ պատմութիւնը ու աշխարհագրութիւնը՝ ռուս լեզուով: Բ. Այդ դասատուները պարտաւոր են ռուսահպատակ ըլլալ և ճշմարիտ բարոյականի տէր: Տեսուչները իրաւունք չունին դպրոցներու տնտեսական գործերուն խառնուելու և հաշիւ պահանջելու:

3. Այն վարժարանները, որոնց նպատակն է հոգեւորականներ պատրաստել, ազգ. ուսումնարաններու տեսչութեան չեն կրնար յանձնուիլ, այլ կը մնան հոգեւոր վարչութեան լիակատար հոգածութեան տակ: Այս վարժարաններու ուսմանց ընթացքը և ներքին վարչութեան կանոնները բարձրագոյն իշխանութիւնէն վաւերացուած պէտք է ըլլան:

Այս բացատրութիւններուն համեմատ, Կայսեր բաղձանքն է որ, Ձեր Ս. Օծութիւնն

ալ, իր կողմէ աշխատի հարկ եղած կարգադրութիւններն ընել, յանձնարարելով Հայոց բոլոր հոգեւորականներուն որ, հսկեն հանրակրթական եկեղեցական ծխական դպրոցներուն վրայ, նոյնպէս պատուիրել ազգ. ուսումնարաններու տեսուչներուն որ, վերոյիշեալ սկզբունքներուն հաւատարիմ մնան և դպրոցներու հաղորդելով նշանակուած կանոնները, փութաք պարտաւորցնել վիճակային վարչութեանց կողմէ ընտրուած տեսուչները՝ որպէս զի ճշդօրէն ի գործ դնեն իրենց վրայ ծանրացող պարտականութիւնները՝ հարկ եղած օժանդակութիւնն ալ ընձեռելու յանձնառութեամբ:

Գալով վանական վարչութեան խնդրին, նկատելով որ 988 և 1034 յօդուածներուն տրամադրութեանց համաձայն՝ վանքին ամբողջ երեւմտաքին վրայ կը հսկէ արդէն վանական վարչութիւնը, եւ 935 ու 938 յօդուածներուն համեմատ՝ Կաթողիկոսը, իրրեւ բացարձակ պետը Էջմիածնի վանքին, ինք կը վարէ անոր բոլոր գործերը ա'յնպէս ինչպէս կը տրամադրեն եկեղեցական կանոնները, ու մանաւանդ նկատելով որ, —ինչպէս Ձեր Ս. Օծութեան պատասխանէն ալ հասկըցուած է, —վանական կաղմակերպութիւնը հնաւանդ ու բազմաժամանակեայ իրաւասութիւն մըն է, և թէ վանքին հարստութիւնը, 970 յօդուածին համաձայն, կը գտնուի Սիւնօղի գանձապահին հսկողութեան տակ, և ծախքերն ալ Սիւնօղին կողմէ կ'օրագրուին, Կայսրը հաճեցաւ ընդունիլ այս խնդիրներուն լուրջը յարուցուած անհամաձայնութիւններուն բարեք կարգադրութիւնները, ազգուորէն դիտել տալով թէ՛ վարչութեան անդամակցութենէն դուրս ձգուած պիտի նկատուին անոնք որ ռուս հպատակութիւնը չեն ընդունած:

Կայսեր բարձրագոյն կամքին համեմատ՝ Ձերդ Ս. Օծութեան հաղորդելով և գործադրութիւնը խնդրելով այս կանոնադրութեան, պատիւ ունիմ մնայու՝ յարգանքով և մտերմութեամբ՝ Ձեր Ս. Օծութեան ամենախոնարհ ծառան՝

Ներքին գործոց նախարար
Կ. ԼՕՊԱՆՈՎ

23 օգոստ. 1874

ՆՈՐԵՐՈՒ ԲԱԺԻՆԸ

Պէրպէրեան վարժարանի այս տարուան վկայականներու բաշխման հանդէսին՝ չըջանաւարտներէն Պ. Ռուբէն Զիլինկիրեան կարգացած էր իր հեղինակած գողտրիկ մէկ ոտանաւորը, Բաժանման խօսքէր, որ ընդհանուր գնահատման արժանացաւ, և հանդէսին ներկայ գտնուող գրագէտ ու գրասէր անձնաւորութեանց կողմէ փափագ յայտնուեցաւ որ հրատարակուի Մասիսի մէջ, իբրեւ երախայրիքը ապագայ խոստացող երիտասարդի մը։ Այդ փափագին գոհացում կուտանք հըրատարակելով սոյն ոտանաւորը որ կրնայ լաւ տեղ մը գրաւել «Նորերու Բաժին»ին մէջ։

ԲԱԺԱՆՄԱՆ ԽՈՍՔԵՐ

Սիրելի Տնօրէնիս Խ. Յ. Պէրպէրեանին

Վարժարանէս պէտք է որ ա՛լ գնանք հեռու... Մեր մանկութեան օրերն գացին հեշտագին, Տարիներն ալ յաղորդեցին իրարու՝ Արագ և քաղցր՝ զեփուռին պէս գարնային... Վարժարանէս պէտք է որ ա՛լ գնանք հեռու։

Նրէկ դեռ փոքր՝ նորեկ տղեկ էինք հոս. ձամբան երկար, ու յոգնութեամբ լեցուն էր։ Ժամանակը առուակին պէս մեղմահոս՝ Գրկեց ըզմեզ, առաջնորդեց մեր քայլեր։ Նրէկ դեռ փոքր՝ նորեկ տղեկ էինք հոս։

Հիմայ հասած ենք զպրօցի վախճանին. Ա՛լ չիք մեր քալն յառաջ մղող շարունակ. Մեզի համար դաս ու համար վախճանին, Ու հրաժեշտի կը հնչէ ժամն տխրունակ... Հիմայ հասած ենք զպրօցի վախճանին։

Ճամբորդին պէս որ գաղաթէն կը դիտէ կողը բլրոյն ուր մագլցէր քիչ առաջ, Փըլոտ ուղին ու ղաշտերն ալ մարմանդէ, Ու բերկրագին՝ կուրծքէ թռուի լա՛յն հառաչ. Ճամբորդին պէս որ գաղաթէն կը դիտէ։

Յուզմունքով լինայուածք նետենք մեր ետին Դիտենք ճամբան որ թա՛ց է դեռ քրտինքով... Յիշատակներ կը խօսին չե՛շտ մեր օրտին, Ու մեր աչքերը կը լենան արցունքով... Յուզմունքով լինայուածք նետենք մեր ետին։

Ի՛նչ քաղցր էր կեանքն որ սուրբ յարկիս տակ անցաւ...

Աշխատութիւն, խոկմունք, ջանքեր կրթանուէր, Ասո՛նք ահա եղան մեր կեանքն որ անցաւ Այս յարկին տակ՝ խաղաղիկ ու աշխատասէր։ Ի՛նչ քաղցր էր կեանքն որ սուրբ յարկիս մէջ անցաւ։

Մեր դպրոցի կեանքին հասաւ ժամն յետին. Ու այդ ժամուն ըոպէները յամբօրէն Տեսնենք ահա, կը կորսուին կ'անհետին... Ո՛հ, վշտաբեկ սրտով հրաժեշտ տանք իրեն. Մեր դպրոցի կեանքին հասաւ ժամն յետին։

Հրաժե՛շտ, հրաժե՛շտ... հրաժե՛շտ յարկիս յաւիտեան...

Սիրոյ ջերմ բոյն՝ ուր մենք թռչնիկ երգեցիկ՝ Մեր մայր թռչնէն առինք ջամբերն գիտութեան, Եւ սովորեցանք աշխատանքի երգն գեղեցիկ։ Հրաժե՛շտ, հրաժե՛շտ... հրաժե՛շտ յարկիս յաւիտեան...

Հրաժեշտ անո՛նց ուր կեանքն անցաւ հեղասահ։

Սենեակներուն, սեղաններուն, օրահներուն. Անոնց վրա՛յ են մեր կեանքին չիթերն, ա՛հ...

Հրաժե՛շտ կուտանք անոնց ձայնով կերկերուն, Հրաժե՛շտ անոնց ուր կեանքն անցաւ հեղասահ...

Հրաժե՛շտ մեր միւս ընկերներուն—դեռ փոքրիկ—

Որոնց հետ նոյն կեանքն ապրեցանք եղբօր պէս,

Վայելեցինք գգուանգն ու սէրը գողտրիկ Միւսնոյն հայր—սղաշտպանի մը սիրակէզ. Հրաժե՛շտ մեր միւս ընկերներուն—դեռ փոքրիկէ

Հրաժեշտ ձե՛զ ալ, բարերարներ մեր մտքին,
Դո՛ւք ուսուցիչք, դո՛ւք պաշտօնեայք անձ-
նուէք

Յառաջացման, զարգացման սուրբ խորանին...
Ուսանողի մեր ջանքերուն տուիք թեւեր.
Հրաժեշտ ձեզ ալ, բարերարներ մեր մտքին:

Հրաժեշտ և քե՛զ, քեզ սիրելի ուսուցչապետ(*)
Որ մատենադար մէջ ձեւեցիր մեր հոգին,
Յոռի կիրքերն դուն դարձուցիր հոն անհետ,
Փոխան դրո՛ր ինչ որ կար ներսըդ անգին...
Հրաժեշտ և քե՛զ, քեզ սիրելի ուսուցչապետ:

Հրաժեշտ քեզի, կրթական ժիր գործաւոր
Որ գրիչիդ, լեզուիդ ճարտար մուրճին տակ՝
Ու դպրոցիդ սալին վրայ փառաւոր
Կռեցիր մեզ ու դարձեցիր շարունակ...
Հրաժեշտ քեզի, կրթական ժիր գործաւոր:

Հրաժեշտ քեզ, մտքի մըշակդ յարգելի
Որ հերկեցիր խոսքն արտը մեր մտքին.
Ուրեցիր անկէ փուշն ու տատակ դառնալի
Ու դրիր սերմերն Ուղղին, Բարւոյն, Դեղեց-
կին...

Հրաժեշտ քեզ, մտքի մըշակդ յարգելի:

Այլ է՛ր այսքան խո՛ր մեր սիրտը կը յուզի...
Լոկ մեր մարմին պիտի երթայ քեզմէ բաց,
Հոգին մընայ պիտի փարած միշտ քեզի,
Քո յիշատակ պիտի ըլլայ անմոռաց...
Այլ է՛ր այսքան խո՛ր մեր սիրտը կը յուզի...

—Ո՛հ, դպրոցին կարօտն է որ մեզ խռովէ,
Նախազգացուած խոր կարօտը սիրագին,
Կարօտն սրտիդ՝ որ համակ սէր գործի է.
Կարօտն լոյսով, լոյսով լեցուն քո մըտքին...
—Ո՛հ, դպրոցին կարօտն է որ մեզ խռովէ:

Զաւակներու պէս որք տունէն հեռանան,
Մընանք աղսո՛ւր ու գլխահա՛կ, մըտածկոտ...
Մեր սիրտն լենայ արտմութիւնով անսահման,
Անառաջնորդ դողդոջն քայլք մեր կըթոտ,
Զաւակներու պէս որք տունէն հեռանան:

(*) Ռ. Յ. Պէրպէրեանին

Տէ՛ր, դո՛ւ մեր մէջ դըրիր պապակն ուս-
մունքին,
Գիտութեան կիրքն անդուսպ մեր մէջ դո՛ւ
ծընար.

Տալու համար մեզ զարգացման սէրն անգին՝
Գործածեցիր ամէ՛ն միջոց, ամէն հնար:
Տէր, դո՛ւ մեր մէջ դըրիր պապակն ուսմուն-
քին:

Այդ պապակին յագուրդ տալու անկարող
Քանին՝ կան որք կը մընան անպաշտպան.
Ա՛հ, քանիններ չունենալով միջոց, փող,
Իրենց միտքը մնայ անուա ու խոպան,
Այդ պապակին յագուրդ տալու անկարող...

Ձե՛զ մանաւանդ, հոգւոց մեր Հայր աննրման(*)
Վարժարանաց մեր հոգածու և ուղղիչ,
Ձեզ կը յանձնենք այս մանկըտին պատուա-
կան,

Զի խնամէք զայն ձեր թեւոց տակ շինիչ,
Ձե՛զ մանաւանդ, հոգւոց մեր Հայր աննրման:

Վարժարանէս պէտք է որ ա՛լ գնանք հեռու...
Մեր մանկութեան օրերն դացին հեշտաղին,
Տարիներն ալ յաջորդեցին իրարու՝
Արա՛գ և քա՛ղցր՝ զեփուհին պէս գարնային...
—Վարժարանէս պէտք է որ ալ գնանք հե-
ռու...

ՌՈՒԲԷՆ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

(*)Ս. Պատրիարք Հօր

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՃԱԲՈՆՑԻ ԳՈՐԾԱՒՈՐԸ

Պ. Բօլ Լուի հետեւեալ շահեկան ուսում-
նասիրութիւնը հրատարակած է ճարտնցի
գործաւորին վրայ՝ բարիգեան Ռիվիւ Պիե
Հանդէսին մէջ. —

Արդի Ճաքոն 400,000 գործաւոր ունի,
որոնք մեծ ճարտարարուեստին կը վերաբե-
րին: Այս թիւը շատ քիչ է, բաղդատամբ
Անգլիոյ, Ֆրանսայի ու Իտալիոյ մէջ գըտ-
նուող գործաւորներուն, մէկ կողմ ձգելով
Գերմանիան ու Մ. Նահանգները, որոնք
շատ աւելի բաղամարդք են Ճաքոնէն: Բայց

այդ թիւն ալ մեծ բան է, երբ նկատի առնենք որ քառորդ դար առաջ, շատ փոքրաթիւ էին ճարտարների գործաւորները: Երկուսեկու վերաբերող այդ 400,000 հոգին կ'աշխատին 1400 գործարանի մէջ, այսինքն 120 հոգի կ'իյնայ իւրաքանչիւր գործատան: Բայց կարգ մը հաստատութիւններ կրնան բաղդատութեան դրուիլ Ֆրանսայի հիւսիսարեւմտ, Լանքշայրի և Ռէնանեան Բրուսիոյ մէջ գտնուող կարեւոր գործատանց հետ: Թոքիոյի Փանէֆուակաչի տարազագործարանը ունի 55,000 շամիրակ և 3000 գործաւոր կ'աշխատցնէ: Օգաքայի Պոդէքի գործատան մէջ կան 4000 հոգի՝ էրիկ մարդ, կին ու տղայ: Մուրայիի սիկաուէթի գործատունը՝ Բիոթոյի մէջ՝ 5000 գործաւոր կ'աշխատին:

Մետաքսի գործարանները ունին 129,000 աշխատաւոր, մանարաններու և հիւսուածեղէնի գործարանները՝ 113,000 հոգի, մետաղի գործարանները՝ 37,000 և մեքենական շինութեանց գործարանները՝ 29,000. Ճարտի տնտեսական կազմակերպութեան վրայ շատ սխալ գաղափար մը կը կազմէր, եթէ երբեք իրարմէ անջատէք մեծ գործարաններու արտադրութիւնները և տուներու մէջ կատարուած աշխատութիւնները: Ինչպէս Եւրոպայի մէջ գործարանատէրերը չահաւոր գտած են փոքր ճարտարարուեստին շարունակումը, ո'չ թէ անոր մրցումին ենթարկուելու, այլ տիրապետելու և ձեռք անցնելու նպատակաւ, Ճարտի մէջ ալ մղում կուտան փոքր ճարտարարուեստին. անոնք որ գործ կ'արտադրեն իրենց տան մէջ՝ պարզապէս թոշակաւոր են, գործարանատէրերու կողմէ վարձուած: Այսպէս, Բիոթոյի մէջ, Միցուիի գործարանէն կախում ունին 400 հոգի, որոնք իրենց տուներուն մէջ կ'աշխատին:

Աշխարհի ոչ մէկ մասին մէջ կինը ճարտուհիին չափ տնտեսական կարեւոր դեր չի կատարեր: Անգլիոյ, Ֆրանսայի և Ռուսիոյ մէջ անգամ աշխատող կիներուն թիւը չի հաւասարի ճարտ գործաւորուհիներուն, նոյն իսկ այնպիսի զբաղումներու մէջ, ուր կնոջ ներկայութիւնը ամէն կարգի առաւելութիւններ կ'ընծայէ: Երբեմն կը պատահի

որ Թոքիո և Օգաքա քաղաքներուն մէջ աշխատաւոր կիներուն թիւը վեցպատիկ ու մինչև տասնապատիկ աւելի ըլլայ կիներէն: Փանէֆուակաչի գործարանին 3000 աշխատաւորներուն մէջ 2700ը փափուկ սեռին կը վերաբերին: Օրէնքները այնքան թոյլատու են որ ձեռնարկուները ուղածուն պէս կըրտան շահագործել գործաւորուհիին աշխատութիւնը: Թէ՛ կիները և թէ՛ տղաք չաքաշար կերպով աշխատելու բռնադատուած են, ինչպէս կը պատմեն ականատես ճամբորդներ:

Ճարտի մէջ առաջին տնտեսական օրինագիծը պատրաստուեցաւ 1897ին. Խորհրդարանին ներկայացուելէ առաջ՝ մանարանատէրերը դժգոհութիւն յայտնեցին, ըսելով թէ իրենք բոլորովին կը կործանէին, եթէ ընդունուէր ան: Մնաց որ, օրինագիծը մեծ բան մը չէր արժեր ինքնին և շատ մը թոյլտուութիւններ կը նուիրագործէր: Վերջապէս իրաւախոհութեան յանգեցան: Ու ձեւափոխուած օրինագիծը քուէարկուեցաւ, բայց գործադրութիւնը երեսի վրայ մնաց: Այսպէս գործաւորական պայմաններու քննութիւնը ազդու հանգամանք մը չուեցաւ երբեք:

1902ին ընդունուած օրինագիծը կ'արգիւէր 11 տարեկանէն վար աշակերտ չառնել, արգելք մը որմէ ազատ էին մանարանատէրերը և հանքատէրերը, որոնց գործին կուգար 7—8 տարեկան տղաք գործածել: Ասկէ զատ, օրական աշխատութիւնը 12 ժամ պիտի ըլլար պատանիներու և կիներու համար: Եւ որովհետեւ ու է արգելք չկար գիշերային աշխատութեան մասին, ի հարկին՝ ցերեկուան աշխատութիւնը կ'երկարաձգէին մինչև ուշատեսն, և ասիկա՝ կամայական կերպով: Մանարաններու մէջ՝ աշխատութեան նուազագոյն չափը կը կազմեն 11 ժամ, բայց յաճախ կիներն ու պատանիները 14 և 17 ժամ կ'աշխատին: Ճարտի մեծ ճարտարարուեստին յատուկ մասնաւոր սովորոյթները օրինական ամէն տրամադրութենէ զերծ կը կացուցանեն գործի տէրերը: Ամէն ամիս երկու արձակուրդ կը տրուին աշխատաւորներուն, բայց հոկոյնութիւն չըլլալուն համար՝ այդ պարբերական դադարն ալ չի տրուի երբեմն:

Երկու առանձնայատկութիւններ կը յատկանշեն ճարտարարուեստը: Մէկ կողմէ գիշերային աշխատութիւնը նախընտրելի կը համարուի ցերեկուան աշխատութենէն. գործատէրերը սա բացատրութիւնը կուտան թէ գործարանը բնակարաններէն աւելի զով կ'ըլլայ ամառը և տաքուկ ձմեռը: Գործաւորներն ալ այս կարծիքէն են: Միւս կողմէ, բոլոր կարեւոր գործարանները ունին ննջարան և մատակարարական ճիւղ մը՝ գործաւորներու համար: Աւելորդ է ըսել թէ անկողնեքը և սնունդը շատ գէշ են. տրուած կերակուրները միայն բանջարեղէնով պատրաստուած են, և յաճախ ամէնէն ցուրտ ամիսներուն՝ վերմակը գոյութիւն չունի հոն: Գործարանատէրերը կրկնապատիկ կը շահին այս դրութեամբ, քանի որ թէ՛ ծախուած ուտելիքներուն վրայ շահ մը կը գոյանայ և թէ՛ ուղած ատեննին իրենց տրամադրութեան տակ կ'ունենան գործաւորները: Բանէֆուկաչիի գործաւորուհիները երեք չորս անգամ միայն դուրս կ'ելլեն մէկ ամսուան մէջ. Պողէքիի գործաւորուհիները ազատ են դուրս ելլելու իրիկուան ժամ 6—8 միայն ու վաճառողներէն քանի մը վայրկեան ուշ կը դառնան:

Ֆէմինիզմը Միացեալ Նահանգներուն մէջ:

1890ին, մօտաւորապէս չորս միլիոն կիներ թուակաւոր պաշտօններ կամ գործեր կը վարէին բովանդակ Ամերիկայի մէջ. 1900ին ատոնց թիւը բարձրացած է 5,329,807ի: Միւս կողմէ, իգական սեռի ծնունդները տարուէ տարի կը բազմանան, իսկ մահերը կը նուազին, մինչդեռ այր մարդոց համար՝ հակառակը կը պատահի:

* * * Վերջերս, Վենետիկի եկեղեցիներէն մէկուն մէջ պսակուած ամուսնու, որ արտակարգ քմահաճոյքներ գոհացնելու չափ հարստութեան տէր էր, ինքնատիպ գաղափարը յղացաւ՝ հարսանեկան սեղանը սարքելու... Աւելան սառնակոյտներուն մէջ: Եւ ահա՛ հարս ու փեսայ ճամբայ ելան երկու բարեկամներու ընկերակցութեամբ, տեղացի ա-

ռաջնորդներով, ու բարձրացան Մոն—Պլանի գագաթը: Որոշուած տեղը հասնելուն, իրենց ընկերացող սպասաւորները բացին ուտելիքի ու խմելիքի ծրարները որոնց մէջ բան մը պակաս չէր խնջոյքը կատարեալ ըլլալու համար, մանաւանդ աւանդական շամբանան. միայն թէ, երբ շիշերը բացին, քաղցրահամ ըմպելի կարծր սառոյցի վերածուած էր կլիմային ցրտութենէն, և փոխանակ զայն սառեցնելու պէտք ունենալու, —ինչպէս սովորութիւն է—ընդհակառակը հարկադրուեցան շամբանայի շիշերը տաքցնել ալքոլաւոր կանթեղի մը վրայ:

* * * Ամերիկեան «թրքսթ»ները առեւտրական կամ հանքային հսկայ գործառնութեանց մէջ չէ միայն որ կը մրցին իրարու հետ: Թատերական գործն ալ միլիոնատէրերու ձեռքը կ'անցնի՝ իբրեւ շահադիտական ձեռնարկութիւն: Թատերական եղանակը մեծ ոգեւորութիւն կը խոստանայ յառաջիկայ ձմեռուան համար, ինչպէս Նիւ—Եօքէն կը հաղորդեն Բարիզեան թերթերուն, վասն զի առաջին անգամ ըլլալով կը տեսնուի որ երկու «թրքսթ»ներ կատաղի պայքար մը կը մղեն իրարու դէմ: Ամերիկայի մէջ, բաց ի քանի մը մեծ քաղաքներէ, թատերական մնայուն խումբեր գոյութիւն չունին. իսկ շրջուն խումբերն ալ կը գտնուին «թրքսթ»ի մը ձեռքը որ իր զբամական ոյժերով ոչ միայն կը յաղթէ որ և է մրցակցական փորձի, այլ հնար եղածին չափ բազմաթիւ թատրոններ վարձած է զորս կը շահագործէ Հիւսիսային Ամերիկայի քաղաքներուն ու գիւղաքաղաքներուն մէջ իսկ: Այս «թրքսթ»ին գէտ ելած է հիմայ դօրաւոր մրցակից մը, Պ. Տավիտ Պէլասքօ, Նոր Ալխարհի թատերական է'ն ճարտար տնօրէններէն մէկը որ պէտք եղած զբամազելու ինչ հայթայթած ըլլալով՝ ապահոված է ժողովրդական հեղինակներու աշխատակցութիւնը և արդէն իսկ վարձած է 27 գաւառային թատրոններ:

Երկու «թրքսթ»ներուն միջև մրցումը սկսած է, և իւրաքանչիւրը լիաբուռն տօլար կ'առաջարկէ արուեստագէտներուն ու հեղինակներուն՝ զանոնք իր կողմը շահելու համար:

* * Բօրթումաութի մէջ կատարուած հաշ-
տութեան բանակցութիւնները իրենց նմանը
չեն ունեցած որ և է պատերազմի յաջորդող
բանակցութեանց պատմութեան մէջ: Միայն
Պ. Ուրթէ և Պ. Վօմուրա խօսք կ'առնեն,
իւրաքանչիւրը գործածելով լեզու մը զոր
միւսը չի հասկնար: Ռուսական առաջին
պատուիրակը իր դիտողութիւնները կ'ընէ
կիսկատար փրանսերէնով մը, երբեմն ալ
ռուսերէն, որ կա'մ անգլիերէնի կը թարգ-
մանուի կա'մ ճարտերէնի: Տրուած պատաս-
խաններն ալ կրկին անգամ կը թարգման-
ուին, բայց այնքա՛ն գէշ կերպով որ լիա-
զօրները իրար չեն հասկնար: Խորհրդակցու-
թեանց պահուն ճաքոնցի պատուիրակները
երբեմն կը փոփոսան իրարու հետ կամ թուղ-
թեր կը փոխանակեն, և կամ իրենցմէ մէկը
ուրիշ սենեակ մը կը քաշուի՝ մասնագէտի
մը հետ խորհրդակցելու համար:

* * Օսեւա Նովոսթի թերթը կը պատմէ
թէ օգոստ. 7ին մինչ Տօքո. Բօլիանքօֆ ա-
նուն բժիշկ մը ագարակի մը առջեւէն կ'անց-
նէր, աղքատ կին մը կեցուց զինքը և խնդ-
րեց որ իր չորս տարեկան հիւանդ տղուն
այցելէ: Տօքո. Բօլիանքօֆ հիւանդ տղեկը
քննելէ ետք ըսաւ թէ պէտք է զայն ման-
կանց հիւանդանոցը տանիլ և բժշկական
գործողութիւն կատարել, բայց ծնողքը
չհաւանեցաւ: Յաջորդ օրը նորէն այցելու-
թեան գնաց և տղեկը լաւագոյն վիճակի
մէջ գտաւ. այն ատեն որոշեց անձամբ կա-
տարել գործողութիւնը. բայց գործողութեան
պահուն Տօքո. Բօլիանքօֆ սարսուռաց և
գունատեցաւ. սխալ լախտադնութիւն կա-
տարած էր. հասկցաւ որ տղուն մահուան
պատճառ պիտի ըլլար. երկար ատեն սպա-
սեց գործողութեան արդիւնքին. ինք-
զինքէն ելած, անմեղ փոքրիկ զոհին
սնարին մօտ կ'արտասուէր և ինքզինը
մարդասպան կ'անուանէր: Երբ հաս-
կըցաւ թէ ամէն բան լմնցած էր, սեղանին
մօտեցաւ, քանի մը տող գրեց աճապարան-
քով, երկտողը դրաւ մեկնի չիշին տակ և
առանձնութեան վայրկեանի մը մէջ անձ-
նասպան եղաւ: Իր ձգած երկտողը սա էր.
«Ներեցէ՛ք երիտասարդ բժիշկի մը, իր ակա-
մայ սխալմունքին համար, որուն պատճառաւ
զձեզ զրկեց ձեր մէկ հատիկ գլաւկէն, ոճիրս
քաւեցի. երանի՛ թէ իմ մահս կարենար
մխիթարել զձեզ ձեր դառն սուգին մէջ»:

ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Ա. զգ. Կեդրոնական Վարժարանի Խնամա-
կալութիւնը կը ծանուցանէ թէ վարժարանին
նոր տարեշրջանը կը սկսի յառաջիկայ Սեպ-
տեմբեր 5, Երկուշաբթի օր: Ա. կարգը մշա-
նել փափաքող աշակերտները կը հրաւիրուին
ներկայանալ Ղալաթիոյ Խորհրդարանն ամէն
օր, մինչև ժամը 3½, ըստ Թրքաց, արձա-
նագրուելու և ստանալու համար մօրից քնն-
նութեանց ծրագիրը: Պատ. Ուսումնական
Խորհրդոյ կողմէ վկայուած շրջանաւարտներն
առանց քննութեան կ'ընդունուին:

Մօրից քննութիւնները պիտի կատարուին
յառաջիկայ Օգոստոս 30, Գշ. և 31, Դշ.
օրերը, ժամը 1½ին (Բ. թ.):

Իսկ Կեդրոնական Նախակրթարանի բա-
ցումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Օգոստ.
20, Երկուշաբթի օր: Հետեւաբար կը հրա-
ւիրուին թէ՛ հին և թէ՛ նոր գալիք աշա-
կերտները մինչև նոյն օր ամէն առաւօտ
ներկայանալ Ղալաթիոյ Խորհրդարանը՝ ար-
ձանագրուելու համար: Նոր գալիք աշա-
կերտք պարտաւոր են ի ձեռքն ունենալ
պատուաստի, ծննդեան և ելած վարժարանին
վկայականները:

Ի դիմաց Խնամակալութեան

Ասեմադպիք

Ասեմապես

Յ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

Յ. ԷՍԱԵԱՆ

30 Յուլիս 905, Ղալաթիա

ՌՕՊԵՐԴ ԳՕԼԷՃ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը
կը սկսի սեպտ. 1/14ին: Կարգադրութիւններ
եղած են վաճառականական ուսումը բաղ-
ձացուած կատարելութեամբ աւանդելու հա-
մար, Վարժարանիս մասնաւոր բժիշկը ուսա-
նողներու առողջութեան, մարմնամարզներու
և խաղերուն, ինչպէս նաև վարժարանին
ընդհանուր առողջապահական վիճակին վրայ
կը հսկէ: Մարմնամարզի նոր և գեղեցիկ
մասնաւոր շէնք մը կառուցուած է նորոգա-
պէս, իր մէջ ունենալով մարմնամարզի ամէն
տեսակ գործիքներ, վերջին դրութեանց հա-
մաձայն Երկու տարիէ ի վեր բացուած է
նաև փոքր տղոց յատուկ նոր շէնք մը, ուր
կ'ընդունուին մինչև տասը տարեկան աշա-
կերտներ:

ՄԱՍԻՍ իր ներկայ տարեշրջանի առաջին վեցամսեան կը բոլորէ ամսոյս վերջը: Այս առթիւ հարկադրուած ենք անգամ մըն ալ հրապարակային կոչ մը ուղղել մեր այն հեռաբնակ բաժանորդներուն որոնք տակաւին չեն վճարած իրենց բաժանորդագինը, որ բարեհաճութիւնը ունենան փութացնելու իրենց տարեկան բաժանորդագինը կազմող համետ գումարին առաքումը:

ՄԵԻՔԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Քաղկեդոն-Մոսկ

Կը բացուի Սեպտեմբեր 5ին (ըստ Ն. Տ.): Այս հաստատութեան նպատակն է ապահովել աշակերտներուն բարոյական և մտաւորական կրթութիւն մը՝ տոհմային պահանջումներու համաձայն: Առ այս, բացի Միաբաններէ՝ որոնք վարժարանի վարչական մարմինը կը կազմեն, ունի մայրաքաղաքիս հայ և օտաւրազի լաւագոյն ուսուցիչներու գործակցութիւնը, որոնցմով կը կազմուի քսան հոգիէ բաղկացած ուսուցչական խումբ մը:

Կ'աւանդէ հայերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, անգլիերէն, լատիներէն և իտալերէն լեզուները, յատուկ վաճառականական դասընթացք և կրթարանական բոլոր ընթացիկ ուսումները, ինչպէս նաև դժագրութիւն, նկար, մարմնամարզ, ձայնական երաժշտութիւն, փողերգութիւն (solfare) ևն:

Աշալուրջ և հայրական հսկողութիւն մը կը տիրէ աշակերտաց բարոյականի և կրթութեան վրայ: Վարժարանս իր ծովահայեաց և օդասուն բարձր դիրքով՝ Պոլսոյ մէջ ամենէն հազուադէպներէն մէկն է, և օժտուած է առողջապահիկ կարեւոր միջոցներով, որոնց մէջ այս տարի ևս նորութիւններ պիտի ներմուծուին:

Վարժարանիս ընթացաւարտները կրնան ուղղակի մտնել Եւրոպական Համալսարաններ, և ստուգիւ անոնց յարմարագոյններուն կ'ըլլայ այդ նորո՞ն՝ Միթարեան վարժարանաց ինամակալութեան կողմէ, անոնց առ պագան լիուրի ապահովելու համար, ինչ որ

մեծ առաւելութիւն մ'է Պոլսոյ միւս վարժարաններուն վրայ:

Վարժարանիս տարեկան գումար թոշակն է Դիչերօթիկներուն համար 25 օսմ. լիրա: Աւելի մանրամասնութեանց համար դիմել վարժարանիս Տեսչութեան:

Վերատեսուչ Շ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎՐԴ. ԹՈՐՈՍԵԱՆ
Գատըքէօյ - Մոսկ

ՀԱՅՈՒՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ ԱՏԱԲԱԶԱՐ

Այս վարժարանը, զոր կը վարեն ինը անդամներէ բաղկացած ինամակալութիւն մը, և բնիկ ու Ամերիկացի 11 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը, հիմնական դաստիարակութիւն մը կուտայ բոլոր իրեն դիմող հայ աղջիկներուն: Կ'աւանդուին բնական, իմաստասիրական, չափական և այլ գիտութիւններ: Մասնաւոր ոյժ կը տրուի հայերէն և անգլ. լեզուներուն, կուսուցուին նաև թուրքերէն և ֆրանսերէն լեզուները: Վարժարանին երկու ընդարձակ և օդաւէտ շէնքերը, ինչպէս նաև ինամակալութեան երկու բժիշկ անդամները մեծապէս կ'ապահովեն աշակերտուհիներուն առողջութիւնը: Անատուրի Երկաթուղին, որուն մէկ մասնագիծը մինչև քաղաքս կ'երկարի, ճամբորդութիւնը խիստ դիւրին և հաճելի կ'ընծայէ: Դիչերօթիկներու տարեթոշակն է 12 օսմ. ոսկի, զոր երկու մասնաւորմանով պէտք է հատուցանել: Դաշնակի դասի համար 5 կամ 3 ոսկի կը պահանջուի, դասառութեան թիւին համեմատ: Երգեսնի դասի համար 2ուկէս ոսկի կը պահանջուի: Վարժարանին ԻՍ. տարեշրջանը կըսկսի Սեպտ. 13 (Ն. Տ.) չորեքշաբթի իրիկունը: Վարժարանին նոր յայտագիրը ուղղորդողն ձրի կը ղրկուի:

Աւելի տեղեկութեանց համար դիմել Մր. Բիթի, Պայպլ Հաուս Կ. Պոլիս, կամ գրել Տոքթ. Ս. Էֆ. Գալաթեանի, ատենապետ ինամակալութեան, Ատաբազար:


Հիմնադիր—Կ. Ս. Իթիօթիճեան
Skr. Է. ՏԳՈՐԷՆ—ՏՈՒԹ. ԵԴՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՆԵԼԻՔ Օրագրի

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հ Է Ր Ճ Ա Յ Ի



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Գոհաբեղեցնելու, ամեն ճեսակ կահ կարասիներու եւ ամենեւն անհատ

հագուստներու, եւլն.

Պատիւ ունինք ծանուցանել պատուարժան հասարակութեան թէ՛ մեր վաճառատանց ապրանքներուն տեսակները աւելի ճախարհային ու մեր յարգելի յաճախորդաց աւելի գոհացում տալու նպատակաւ, ՈՍԿԵՐՉՈՒԹԵԱՆ վերաբերեալ ամէն տեսակ ապրանքներէ զոտ. կիներու եւ տղերու համար՝ եւ մեծ ու փոքր ամէն տարիքի յառաւել ԶԳԵՍՏԵՂԵՆՆԵՐՈՒ, ճերմակեղէններու եւ (թօնֆիէ) ու միանգամայն ամէն տեսակ տառջնակարգ ԿԱՐԱՍԻՆԵՐՈՒ (ձեղունի լամբաներ, աֆիսէներ եւ այլն.) ճախ մթերանոց մը հաստատած ենք. խիստ դիւրամատչելի գիններով, եւ կանխիկ ու ապառիկ պայմաններով:

Արդ՝ կը հրաւիրենք մեր համակցելի յաճախորդները, որ հաճին դիմել վերոյիշեալ վաճառատաները, ուրկէ տնտեսական տնտեսական գոհունակութեամբ պիտի մեկնին:

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարիւրին 20 կանխիկ եւ մնացեալ գումարին հարիւրին 5 շաբաթական վճարմամբ:

2. Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ:

3. Կանխիկ ծախուած ապրանքներէն միմիայն ադամանդեայ գոհարեղէնները երբ զարմածուած բայց անվնաս մնացած ըլլան՝ հարիւրին 10 զեղչով եւ կանուխին: Իսկ ապառիկ ծախուած եւ անվնաս մնացած միմիայն ադամանդեայ գոհարեղէններն ալ հարիւրին 15 զեղչով եւ կանուխին:

8-10

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Յ. Գ. Շարաթական վճարմանց համար հաւաքիչներ ընդմիջտ պատրաստ են:

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՒՅ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 13 Կ. ՊՈԼԻՍ



ՌՕՍԻԱ-ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՀ. ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄԲ

1881 մարտ 20ի Կայս. Ուրաղով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՒԿԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈՒԿԵՆԱԻՈՎ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՄՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կոտ-բուելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,666 ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

149,852,000 *

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա-

գլուխ եւ վնասուց հատուցում

355,840,000 »

1903 տարւոյ մէջ դանձուած ապահովագին եւ տոկոս

64,553,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վայկասա, Դալաթեալ:

8-10

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ շահք	274,000,000	Փր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ շահք	129,000,000	Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Ինքնին»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գինեւոյ: Նպաստաւոր պայ- պաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան մայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անհրժեշտ վճարում, որով Ինքնին ապահովագրուողք Ձեր՛՞ք են այն վիսպեւեհն եւ լուսաւ ստուքիւնեհն, որոնց կենթարկուին միշտ անհիշք, ու ժաւաբաժիններու բաւժման (accumulation d'es bënëfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուքեամբ գործող ընկերութեանց կ'ապա- հովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Քաթրնը Օղլու

Մասնաձիւղ Ղալաթիա, Լինայէթ Խան:—Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

4-10

ՓԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԵՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱԾԵՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒԱԿԱՆ. ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ.

ԳՈՒԲՍ ԼՈՒԻ ՏԷ ՊԱՎԻԵՐ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդդէմ հրդեհի եւ ծովային ահապանքերու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Յոյն ընկերութեանց Դրամաւուն է Ի Կ. Պոլիս, Քուէքի Լիօնէ

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՅԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Ալեքսան Խան,

4-10

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԳ. ԸՆԿ.

Հիմնադրված է 1875 թ.

Կը գործէ ուղղակի ճրանս. կառավարութեան նստարանն ունի

Ընթացիկ ապահովագ. 339 ՄԻԼԻՈՆ Ֆր.

Դրամագումար եւ պահեստ 38 ՄԻԼԻՈՆ Ֆր.

Ընդ. գործակալ Պոլսոյ եւ գաւառաց

ԱՐԱՄ Ս. ԳԱԼՖԱՆԱՆ

Պոլիս, Հանգրուոյ խան Դո. 53

Դրամագումար պատուար գործակալներ կը
փնտռուին: 23—50

ՆԱԶԱՐԷԹ ԽԱԶԵՐԵԱՆ

Փ. Ա. ՍՏԱՐԱՆ

Պոլիս, Մարբուհեթյար, Պարմարան խան
Թիւ 26

Ամէն կողմի դատար կը ստանձնէ եւ
խնդրոյ առարկայ եղած գործերու համար
թէ՛ բերանացի եւ թէ՛ թղթակցութեամբ
բանակցութիւններ կը կատարէ եւ կարծիք
կը յայտնէ. կը խմբագրէ եւ կը թարգմանէ
դատարու եւ առեւտրական ու արհեստական
պայմանագրութեան վերաբերող թուղթեր.

Ուրբաթ օրերը մինչեւ կէս օր ձգտալ.
բար խորհրդակցութիւն կը կատարէ եւ կար-
ծիք կը յայտնէ:

Ապահովագրական գործառնութիւններու
եւ ի մասնաւորի կեանքի ապահովագրական
ընկերութեանց նկատմամբ անհրաժեշտ եղող
անդեկութիւնները ձեռնարկ կը կատարէ:

Կը խնամարարէ որ մինչեւ որ այս մասին կա-
րեւոր եղած անդեկութիւնները իրմէ չստաց-
ուին, ապահովագրութիւն չի ստորագրուի:
Ապահովագրական վճարուած հասուցման գու-
մարներու եւ փոխարժեքներու գանձումը
եւս կը ստանձնէ: 12—40

ԱՏԱՄԵՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐՈՒ, ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 200

Կալաթա-Սէրայի Լիսէին դ'մ

Գե. Սե. Շք. օրերը առաւօտեան կանու-

խեն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

Բե. Գե. Ուր. օրերը ճեմ մինչեւ 11 1/2

Երբակի օրերը ժամադրութեամբ 10—10

PHOENIX ASSURANCE L Co.

“ՓԻՆԻՔՍ”



Հիմնադրված է 1782 թ.

Կը գործէ ի ՊՈԼԻՍ 1869 թ. ի ՎԵՐ

ԱՆԻԼ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագումար եւ պահեստի դրամ

Անգլ. ոսկի 4,2 18,

Ֆինիքս առկ հրդեհի դէմ Ապահով-
ագրական ընկերութիւն մըն է, ծանօթ
իր պատուաւորութեամբ եւ վստահաց մէջ
իր անմիջական վճարումներով:

Ֆինիքս կ'ապահովագրէ հրդեհի եւ
կայծակի դէմ մէկն առաւել անշարժ եւ
չարժան օտարութեամբ, յոյժ. նպատակաւոր
պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է.

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ
ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ՎՆԱՍՈՒՑ. Յաճախ վճար-
ած է առաւել քան 27,000,000 անգլ.
ոսկի:

Ընդհ. գործակալ Պոլսոյ եւ գաւառ-
աց: Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Վերայիս խան, Պանֆ Օթումանի ֆոյ
Ղալաթիս:

Փոխ գործակալը ի Պոլիս

ՌՈՒԲ. ԱՐԻԿԵԱՆ ՃԻՎԱՆ ԹԻՔԵԱՆ
Էմին պէյ խան Յնսկեան խան

2—10 Չնիշ բերդերու
Ա. ԷՆՔՍԷՐՃԵԱՆ



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարճ մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սւննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է, Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ. աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՇԱՐԲԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | | |
|---------|---|--|
| ԲԵՐՍ. | } | 1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝ |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱՂԱԹԱ. | } | 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | } | 1. Սուլթան Համամ, Թ. |
| | | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍԿԻՒՏԱՐ | | Չարչը Պօյու, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնք ձեռքի.

Կատարեալ երաշխաւորութիւն:

Մասնանկեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը: 6—10

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Գաղտնիք գեղեցկութեան, Առողջութեան եւ ներկայակեցութեան: Բր. Գ. Պոլէյքըրտէ: Թարգմանեց Անգլիերէնէ, Ս. մուլէ Գ. Վարժապետեան: Կ. Պոլիս. Տպագրութիւն, Յ. Մաթէոսեան, 1905: Հեռագրաւարժ, հրատարակչ, զբօսաւրի եւ ամէն օգուտ ու հոգեկի յօժ պիտանի գրքոյի մը 248 երեսներէ բաղկացեալ: Թղթակազմին գինն է 8 դռն. Լաթակազմին՝ 10 դռն. 10է աւելի գնողներու 15 աւ հարկւր եւ 50է աւելի գնողներու 20 աւ հարկւր դիմել:

ԿԱՐԱՊԵՏ Է. Ժ. ԻԻԹԻՒՃԵԱՆԻ Թարգմանած գիրքերէն հետեւեալները կը գրուին Տէր-Մինասեան գրատունը եւ մայրաքաղաքի միւս հայ գրաւաճառներուն քով.

	հասոր	դր.
Կարմիր մարդոց երդումը	2	10
Ընտանեկան	2	15
Փարիզի ամուսնութիւնները	1	2
Թափառական Հրեայ	4	50
Արաւարձանին աղան	3	15
Հանրահաշիւի օճիկը	1	5
Սկզբունք Բաղ. Տնտեսութեան	1	4
Ընտանեկան գաղափարներ	3	15